

**ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ**

**ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ  
ՅԱՂԹԱՆԱԿԵՑ**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Այսօր ամիսէ մը աւելի, ընդհանրապէս միջազգային եւ մասնաւորաբար հայ ու թուրք հանրային կարծիքը յուզող Ֆրանսայի Խորհրդարանի Հայկական Ցեղասպանութեան ժխտումը ֆրէական յանցագործութիւնը ընդունած, բայց Մերակոյտի կողմէ վաւերացման կարօտ օրինագիծը՝ մի անգամ ընդմիջող դրապէս ֆուտբոլիստի, յանգեցաւ պատմականօրէն անկիւնադարձային նուիրագործումին:

Անոր վեհաշումը Մերակոյտը կանգնած մնաց իր պատուոյ պատուանդանին վրայ: Ան բարձր պահեց իր երկրին ու ժողովուրդին ասպետական արժանապատուութիւնը: Նախամեծար դասեց մարդկութեան անվտանգութեան գերակշռումը: Տէր կանգնեցաւ մարդկային ազատ կեանքի ապահովութեան: Ցեղասպանութեան անշիւրիմ մնացած գոհեքունի յիշատակին իր երկրի յարգանքի տուրքը մատուցեց:

Արդարեւ Մերակոյտը հաստատեց Ազգային Խորհրդարանի կողմէ ֆուտբոլիստի՝ 1915-ին, հայ ժողովուրդի դէմ Օսմանեան կայսրութեան գործադրած Ցեղասպանութեան ժխտումը ֆրէական յանցագործութիւնը անկատար մարդասիրական օրինագիծը: Համաձայն այդ օրինագիծին, ամէն անոնք, որոնք Ֆրանսայի աշխարհատարածքին վրայ կ'ուրանան համաձայն Ցեղասպանութիւնը, պիտի ենթարկուին մէկ տարուայ ազատագրման եւ ֆառատունը հիմնականապէս քրեական տուգանքի:

Հակառակ թուրք իշխանութիւններու կողմէ բանեցում ունուցիկ գոյություններուն, քարձարամակարդակ միջամտութիւններուն, առաւելած խտրաբարոյ այլ անբարտաւան բելադրութիւններուն, երկրի նախագահը վարկաբեկող ծանօթեցնել վերադարձական փողոցային զրպարտութիւններուն, եւ շոյալօրէն պիտակաւորուած պետական սպառնալիքներուն, որոնք կու գային շեշտը դնելու Ֆրանսայի եւ Թուրքիոյ դարաւոր բարեկամութեան պահպանման սպառնացող վտանգին, անոր սահմանադրութեամբ ամրագրուած ազատ խօսքի դաւանումով շահած միջազգային վարկի կորուստին, խորհրդարանական եւ Մերակոյտական ժողովներուն ունեցած իրաւասութիւններուն սահմաններուն անօրինական շրջանցման, եւ այդ բոլորի անտեսումէն ետք, Թուրքիոյ կողմէ Ֆրանսայի դէմ հասցէագրուած սպառնալիքներուն վրայ՝ Ֆրանսա, մնաց առնական, անայլալ շարունակեց իր մարդասիրական առաքելութիւնը,

**ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԸ ՎԱԿԵՐԱՑՈՒՑ ԶԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԸ**

Ֆրանսայի Խորհրդարանի վերին պալատը՝ Մերակոյտը, Յունուար 23-ի երեկոյեան ութ ժամ տեւող քննարկումէ ետք, 127 կողմ եւ 86 դէմ ձայներով վաւերացուց Ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնող օրինագիծը, որ կը վերաբերի Ֆրանսայի կողմէ ճանչցուած ցեղասպանութիւններուն: Ֆրանսա Հայոց Ցեղասպանութենէն բացի ճանչցած է նաեւ հրեաներու ցեղասպանութիւնը՝ Հոլոքոսթը, որու ժխտումը արդէն իսկ քրէականացուած է Ֆրանսայի մէջ:

Օրինագիծը Դեկտեմբեր 22-ին արժանացած էր Ֆրանսայի Խորհրդարանի ստորին պալատի՝ Ազգային Ժողովի հաւանութեան:

Նոր օրինագիծի համաձայն, Ֆրանսայի մէջ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտողներուն կը սպառնայ մինչեւ մէկ տարուայ ազատագրում եւ 45.000 եուրօ տուգանք:

Պաշտօնական Անգարան բազմաթիւ անգամներ յայտարարած էր, որ այդ օրինագիծի ընդունումը, «անդառնալի հետեւանքներ պիտի ունենայ» թուրք-ֆրանսական յարաբերութիւններուն համար:

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայյիպ էրտողան յայտարարեց, որ վերոյիշեալ օրինագիծը ուղղուած է Թուրքիոյ պետութեան, թուրք ժողովուրդի եւ Ֆրանսայի մէջ ապրող թրքական համայնքին դէմ: «Կ'ուզեմ բացայայտ կերպով յայտարարել, որ նման քայլերը շատ



Յունուար 23-ին Ֆրանսայի Մերակոյտէն ներս ընթացող քննարկումներու ընթացքին

ծանր հետեւանքներ կ'ունենան թուրք-ֆրանսական քաղաքական, տնտեսական եւ մշակութային յարաբերութիւններուն համար, իսկ անոր պատասխանատուութիւնը ամբողջութեամբ այդ քայլի նախաձեռնողներուն վրայ է»,- Ֆրանսիայի նախագահ Նիքոլա Սարքոզիին ուղղուած նամակին մէջ գրած էր էրտողան:

Մերակոյտի քննարկումներու ընթացքին ելոյթներով հանդէս եկան բազմաթիւ ծերակուտականներ, իրենց դիրքորոշումը յայտնելով վերոյիշեալ օրինագիծի առնչութեամբ:

Այնուհետ քուէարկութեան դրուեցաւ Մերակոյտի իրաւական հարցերով յանձնաժողովի կողմէ ցեղասպանութիւններուն ժխտումը

մը քրէականացնող օրինագիծի մերժումը թելադրող՝ Դեկտեմբեր 18-ի որոշումը: Այդ որոշումի մերժումէն ետք, Մերակոյտը անցաւ Օրինագիծի քննարկան ու վաւերացման:

Մերակոյտի մէջ ընթացող քննարկումներու ընթացքին հայ երիտասարդներ, Ֆրանսական եւ հայկական դրօշներով ցոյց կը կատարէին Մերակոյտի շէնքին առջեւ: Որոշումը յայտարարուելէ ետք անոնք սկսան երգել՝ «Զարթիւր Լաօ Մունիմ Քօլի» հայրենասիրական երգը:

Օրինագիծը այժմ պիտի ներկայացուի Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիի ստորագրման, որու հաւանականութիւնը շատ մեծ է:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԶԱՄԱԶԱՅՆ  
ԶԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԿԸ ՇԱՐՈՒՄԱԿԵՆ ՈՏՆԱՅԱՐԵԼ  
ՍԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ**

Ազատութեան Տուն (Freedom House) եւ Մարդկային Իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) միջազգային իրաւանց հեղինակաւոր կազմակերպութիւնները հրապարակեցին իրենց տարեկան գեկոյցներ, որոնց համաձայն, անցնող տարուայ ընթացքին Հայաստանի մէջ քիչ բան փոխուած է մարդկային իրաւունքներու եւ ազատութիւններու առումով:

Մարդկային իրաւանց Հսկիչի տարեկան գեկոյցին համաձայն, Հայաստանի իշխանութիւնները կը շարունակեն ոտնահարել մարդու իրաւունքները, իսկ միջազգային գործընկերները ամբողջովին չեն օգտագործել իրենց ազդեցութեան լծակները՝ իրավիճակը բարելաւելու համար:

Յունուար 23-ին հրապարակուած փաստաթուղթին մէջ կազմակերպութիւնն կ'արձանագրէ, որ 2011 թուականի ընթացքին պաշտօնական երեւանը կրկին էական յառաջընթաց չէ արձանագրած

մարտիմէկեան դէպքերը բացայայտելու գծով, սահմանափակած է հաւաքներու ազատութիւնը եւ բաւարար քայլեր չէ կատարած՝ բանակէն ու անազատութեան վայրերէն ներս արձանագրուած մահուան դէպքերը բացայայտելու համար:

Մամուլի ազատութեան նուիրուած բաժնին մէջ կազմակերպութիւնը կը հաստատէ, որ իշխանութիւնները ապաքրէականացուցած են վերաւորանքի ու զրպարտութեան համար նախատեսուած յօդուածները, փոխարէնը սակայն, դատարանները սկսած են մեծ տուգանքներ ու ոչ համաչափ փոխհատուցումներ սահմանել, որոնք, որոշ պարագաներուն սպառնալիք դարձած են թերթերու գոյութեան համար:

Զեկոյցը կ'արձանագրէ որ, 2011-ին Հայաստանի միջազգային գործընկերներէն մի քանին, սահմանափակած են իշխանութիւններու

**ԶԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՉ Կ'ԸՆԵ  
ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐՈՒՄ՝  
ՂԵՏԵԻԼՈՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՕՐԻՆԱԿԻՆ**

Ֆրանսայի Մերակոյտի պատմական որոշումի լոյսին տակ, ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը կոչ ըրաւ Ամերիկեան Գոնկրէսի դեկավարութեան, հաւատարիմ մնալով իրենց խոստումին՝ ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը ու վաւերացնել թիւ 304 բանաձեւը:

«Այս առթիւ երբ մենք ազգովին կ'ոգեկոչենք այս նուաձումը, կոչ կ'ընենք Ներկայացուցիչներու Տան օրէնսդիրներուն, վերահաստատելու իրենց զօրակցութիւնը Հայկական Ցեղասպանութեան ճանաչման», - յայտարարեց Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ Սեւակ Խաչատուրեան:

«Ֆրանսիայի կառավարութիւնը դիրքորոշում ընդունեց թուրք ղեկավարութեան դէմ, որոնք տարիներ շարունակ յաջողեցան թելադրել իրենց անձնական շահերը՝ մարդու իրաւունքներու

# ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻ ՆՈՐ ՏԵՂԸ

## ՅԱԿՈՐԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանի իշխանութիւնն արդէն տեւական ժամանակ է ուղղակի կամ անուղղակի յայտարարում է, որ յաջողութեամբ 2012 թուականի խորհրդարանում օլիգարխները չեն լինելու: Կոնկրետ օլիգարխները էլ իրենք են յայտարարում, թէ խորհրդարան չեն ուզում գնալ, թէ չեն առաջադրելու իրենց թեկնածուները: Շատերի մասին էլ ԶԼՄ-ներն են գրում, որ այս կամ այն մականունաւոր օլիգարխը որոշել է չառաջադրուել: Այդ դէպքերում հիմնականում ասում է, որ այդ որոշումը կայացուել է իշխանութեան կողմ կամ չորհրդով:

Այդ ամէնը կարծես թէ լաւ է, լաւ է, որ խորհրդարանը ինչ որ չափով կ'օլիգարխագրեմք, թէեւ դատելով Հայաստանի իշխանաբաղադրական աւանդոյթներին, այդ դէպքում առաջանում է ինտելեկտուալ կոմֆորմիզմի վտանգը՝ երբ ինտելեկտուալ դէմքերի անուան տակ խորհրդարան կարող են մտնել իշխանութիւն-օլիգարխի դաշինքի սպասաւորներ, որոնք ծառայելու են նոյն դաշինքի, ոչ թէ հանրութեան եւ պետութեան շահին:

Ահա նաեւ այդ համատեքստում, երբ հնչում են յայտարարութիւններ, որ օլիգարխները չեն լինի խորհրդարանում, առաջանում է թերեւս մի պարզ հարց՝ իսկ որտեղ կը լինեն նրանք:

Արդեօ՞ք խորհրդարանում չլինելու պարագայում, օլիգարխի դերն ու ազդեցութիւնը Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքում, իշխանական համակարգում, էպպէս նուազելու է (ենթադրենք դժուար է միանգամից այդ դերը չեզոքացնելու գործը):

Զէ՞ որ ինդիւրը տեխնիկական չէ, երբ այս կամ այն մարդը մանդատ չի վերցնի: Զէ՞ որ շատ օլիգարխների դէպքում դա նոյնիսկ երանելի վիճակ է, որովհետեւ մանդատը նրանցից շատերի համար աւելորդ բեռ է, պատասխանատուութեան եւ հրապարակայնութեան աւելորդ ծանրութիւն, եւ նրանցից շատերը հաճոյքով կը մնային այդ ամէնից հեռու եւ կը վայելէին իրենց փողն ու իշխանութիւնը:

Բայց այստեղ էլ առաջ է գալիս հարցը, թէ ինչո՞ւ էին նրանք յայտնուում խորհրդարանում: Արդեօ՞ք կային օլիգարխներ, որոնք խորհրդարան էին գալիս իրենց կամքին հակառակ:

Խնդիրը թերեւս այն է, որ նրանց հանդէպ բռնութիւն կամ բռնութեան սպառնալիք, ինքնին որեւէ մէկը երեւի թէ չի գործել խորհրդարան բերելու համար, բայց այդ սպառնալիքն ինքնին հանդիսացել են այն համակարգն ու փոխարարները թիւնները, որոնք հաստատուած են երկրում: Այսինքն, օլիգարխն ինքը գնացել է խորհրդարան, որպէսզի իր համար անվտանգութեան երաշխիքներ ունենայ եւ պաշտպանի իր սեփականութիւնն ու դիրքերը:

Խորհրդարանը հանդիսացել է իշխանութիւն-օլիգարխի փոխադարձ գործարքի մի հարթակ, որտեղ կողմերը միմիանց ծառայու-

թիւն են մատուցել եւ ձեռք բերել երաշխիքներ: Ինչո՞ւ օլիգարխն իր փոխարէն մէկ ուրիշին չի գործողել խորհրդարան: Որովհետեւ չի վստահել այդ մէկ ուրիշին, լաւ իմանալով, որ իշխանական համակարգում ամեն ինչ կառուցուած է առք ու վաճառքի սկզբունքների վրայ, եւ այդ մէկ ուրիշը մի օր կարող է իրեն դնել փաստի առաջ:

Օրինակ, խորհրդարան «ուրիշին» էր գործողում միայն Հրանտ Վարդանեանը, որովհետեւ այդ «ուրիշներն» իր որդիներն էին, որոնց դաւաճանութեանը նա թերեւս չէր կասկածում: Իսկ միւս օլիգարխները կամ որդի չունէին, կամ էլ որդիները շատ փոքր են խորհրդարան գործողելու համար, այդ պատճառով էլ հայրերը գալիս էին անձամբ:

Հետեւաբար, խորհրդարանի «կորուստը», կամ դրանում ուղղակի ներգրաւուածութեան հնարաւորութեան կորուստը օլիգարխների համար որոշակիօրէն նշանակուած է կորուստներ երաշխիքային համակարգում: Այստեղ է, որ առաջ է գալիս փոխհատուցման հարցը. խորհրդարանը զիջելու դիմաց նրանք իշխանութիւնից կը պահանջեն փոխհատուցում երաշխիքների մասով:

Տալո՞ւ է արդեօք իշխանութիւնն այդ փոխհատուցումը: Այսինքն, խորհրդարանից դուրս ի՞նչ դերում է յայտնուելու օլիգարխիան: Դա է ամենակարեւոր ինդիւրը, ոչ թէ խորհրդարանում լինել չլինելը:

Որովհետեւ եթէ տեղի է ունենալու այդ երաշխիքային «փոխանակումը», ապա «յետերաշխիքային» սպասարկման որակի առումով հանրութեանն ու պետութեանը որեւէ լուսաւոր հեռանկար չի սպասում:

Խնդիրը Հայաստանում այն չէ, որ օլիգարխը դուրս մնա խորհրդարանից: Խնդիրը Հայաստանում այն է, որ օլիգարխի մտնի օրէնսդրական եւ սահմանադրական դաշտ: Որովհետեւ, եթէ այս կամ այն մականունաւորը, նախագահի այս կամ այն մերձաւոր օլիգարխը կամ հարազատը պէտք է խորհրդարանում չլինի, բայց շարունակի միեւնոյն «անբռնագրասութեամբ» իշխել պետական եւ հասարակական կենսագործունեութեան հետ առնչուող ոլորտներում, ապա խորհրդարանի օլիգարխագրեման այստեղ արդէն ստանում է գործի արժէք:

Խորհրդարանից դուրս բերելու միաժամանակ, հանրութիւնը պէտք է տեսնի, թէ ինչպէս է օլիգարխի մտնում Սահմանադրութեան եւ օրէնքի դաշտ, թէ ինչպէս է երկրում իր դիրքերը զիջում իշխանութիւն-օլիգարխի դաշինքը: Այլապէս կը նշանակի կամ պարզապէս կը ստացուի, որ այդ դաշինքն ընդամենը մանեւրում է:

Մինչդեռ այդ մանեւրի հնարաւոր է ֆեկտը, նոյն այդ դաշինքի երկու կողմի համար էլ, լինելու է չափազանց կարճաժամկէտ, որովհետեւ հանրային կոմունիկացիաների արագ առաջընթացի պայմաններում այդօրինակ մանեւրները դեռեւս չեն «խեղդուում», բայց բացայայտում են «օրօրոցում»:

«ԼՐԱԳԻՐ»

# ԱՅՍ ԱՆԳԱՍ ԺՈՂՈՎՈՐԴՆ Է ԸՆՏՐԱԿԱՇԱՌԲ ԲԱԺԱՆԵԼՈՒ

## ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Հայաստանում ակտիւօրէն շրջանառութեան մէջ է դրուում այն գաղափարը, թէ իբր ժողովրդի մեծամասնութիւնն ընտրութիւններին սպասում է, որպէսզի «մի երկու կողմէ» փող աշխատի (այսինքն՝ ընտրակաշառք վերցնի), հետեւաբար՝ իշխող կուսակցութիւնն ինչ-որ իմաստով ժողովրդի կամքն է կատարում, երբ ամէն գնով պահպանում է մեծամասնական ընտրակարգը: Այդպէս մտածողներն իսկապէս շատ են, բայց պատճառն ընդամենը այն է, որ այդ մարդիկ լաւ չեն պատկերացնում իրավիճակը, իշխանական քարոզչամիջոցներն էլ, բնականաբար, իրենց նեղութիւն չեն տալիս բացատրել, թէ իրականում ինչն ինչոց է:

Ըստ էութեան, ցանկացած ընտրութեան ժամանակ Հայաստանում գործում է «փող-իշխանութիւն-աւելի շատ փող» սխեման: Այսինքն՝ փող ունեցողը մասնակցում է ընտրութիւններին, դառնում պատգամաւոր եւ իր այդ կարգավիճակն օգտագործելով՝ աւելի շատ փող վաստակում: Նոյնն էլ անում են մարդկանց առանձին խմբերը (կուսակցութիւնները), բայց՝ աւելի մեծ մասշտաբով: Սակարծես թէ բոլորն են հասկանում, բայց իրական մասշտաբները քչերն են պատկերացնում:

Իսկ իրական մասշտաբներն այսպիսին են: Խորհրդարանական ընտրութիւններում, ինչպէս յայտնի է, լուծուած է այն հարցը, թէ մարդկանց ո՞ր խումբն է առաջիկայ 5 տարիներին ղեկավարելու Հայաստանը: Իսկ այդ ղեկավարումը կոնկրետ նիւթակաւ արտայայտութիւն ունի: Ընդդիմութիւնն, օրինակ, հաշուարկներ է ներկայացնում, որոնց համաձայն՝ միայն տնտեսութեան ստուերը կրճատելու եւ հանքարդիւնաբերութեան ոլորտի ռազմավարութիւնը փոխելու շնորհիւ հնարաւոր է շատ հանգիստ կրկնապատկել պիւտճէն: Այսօրուայ իշխանութիւնները դա չեն անում ոչ թէ այն պատճառով, որ չեն հասկանում դա, այլ որովհետեւ այդ «աւելցուկն» իրենք են վերցնում (չիշէք արտասահմանեան լրատուամիջոցների հրապարակած թուերը, ասենք, Ռոբերտ Քոչարեանի ունեցուածքի մասին): Այդ «աւելցուկը» կազմում է տարեկան մօտ 3 միլիարդ տոլար, այսինքն՝ հինգ տարուայ համար 15 միլիարդ: Հենց այդքան գումարի համար են կոխ տալիս իշխանական համակարգի կարկառուն դէմքերը, որովհետեւ բոլորը դրանից փայ ունեն (ամէն մէկն իր չափով):

Հիմա վերադառնանք ընտրակաշառքներին, որոնց իբր այդքան անհամբեր սպասում են ընտրողները: Իշխանութիւնները, հասկանալի է, բոլորին ընտրակաշառք չեն բաժանում. կան մարդիկ, ովքեր դրա կարիքը չունեն, կան մարդիկ, ովքեր առաջարկուած ընտրակաշառքը կը վերցնեն ու առաջարկողի... մնացածը հասկանալի է, բացի այդ էլ՝ բոլորին կաշառելու անհրաժեշտութիւն չկայ: 200 հազար հոգու էլ կաշառեն՝ հերիք է. մնացածը անկեղծ համակիրների ձայներով ու թուեր նկարելով՝ բանով «կը դզեն»: Ընտրակաշառքն էլ, ենթադրենք, 5 հազար դրամ է: Ի՞նչ է ստացուում: Ստացուում է, որ

տուեցին 1 միլիարդ դրամ, «աշխատեցին» 15 միլիարդ տոլար: Բայց ենթադրենք՝ 200 հազար հոգու չեն կաշառում, կէս միլիոնին են կաշառում (խորհրդարանում մեծամասնութիւն ունենալու համար այդքանը բաւական է): Ահա եւ ստացուում է, որ ընտրողի 1 ձայնի գինն իրականում ոչ թէ 5 հազար դրամ է, այլ մօտ 12 միլիոն: Հիմա հարց է ծագում՝ մեր ժողովուրդն ապուշների՞ց է կազմուած, որ այսքանը չեն հասկանում: Իհարկէ ոչ: Լաւ, ենթադրենք՝ սրանք բարդ հաշուարկներ են: Աւելի պարզ թուեր ներկայացնենք: Եթէ Հայաստանում նորմալ իշխանութիւններ ձեւաւորուեն, եւ պիւտճէն կրկնապատկուի, թոշակներն ու նպաստները նոյնպէս առնուակզն կը կրկնապատկուեն: Այսինքն՝ 30 հազար դրամ թոշակ ստացողը 60 հազար կը ստանայ: Հինգ տարուայ ընթացքում տարբերութիւնը կը կազմի 1,8 միլիոն դրամ: Ուրեմն արժէ՞ 5 հազար դրամ վերցնել ու գրկուել այդ հեռանկարից: Փորձի համար մօտեցէ՛ք ցանկացած թոշակաւոր եւ հարցրէ՛ք՝ կը համաձայնուէ՞ր 5 հազար դրամ կաշառք տալ, որպէսզի իր թոշակը կրկնապատկուի: Բոլորը կը համաձայնուէին: Այսինքն՝ պարզ տրամաբանութիւնը յուշում է, որ կոնկրետ Հայաստանում ցանկացած նորմալ մարդ դեռ մի բան էլ ինքն է պատրաստ 5 հազար դրամ կաշառք տալ իշխանութիւններին, միայն թէ նրանք նորմալ ընտրութիւններ անցկացնեն: Ուրիշ բան, որ իշխանութիւնները չեն համաձայնուի. նրանց թիրախը 15 միլիարդ տո-

Շարք էջ 5

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ը ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ՀՔԾ-Ի ԶԵԿՈՅՑԸ

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) սուր քննադատութեան ենթարկեց Յատուկ Քննչական Մատչելիութեան (ՀՔՄ) մարտիմէկեան իրադարձութիւնների վերաբերեալ զեկոյցը:

Նշուած զեկոյցով ՀՔՄ-ն հրապարակեց տեղեկատուական հաղորդում նախաքննութեան կատարած աշխատանքների եւ արդիւնքների վերաբերեալ: Արձազանքելով դրան՝ Կոնգրեսի պետաիրաւական յանձնախումբը եզրակացրել է, որ ՀՔՄ-ն եւ Գլխաւոր դատախազութիւնը ղէպերից չորս տարի անց շարունակում են 2008 թուականի Մարտի 1-2-ի իրադարձութիւնները «ներկայացնել զլիսիվայր», «իրաւապահ եւ ուժային մարմինների բացառապարտի դործողութիւններին տալիս են կամայական դնահատականներ»:

Կոնգրեսի պետաիրաւական յանձնախումբի նախագահ Գագիկ Զհանգիրեանը Յունուար 24-ին հրաւիրած ասուլիսում ուղղութիւն հրաւիրեց այն հանգամանքի վրայ, որ Մարտի 1-ի գործով նախաքննական մարմինը, բացի ներքին գործերի սպայից եւ շարքայից, բոլոր սպանուածներին «փորձում է սեւացնել», վարկաբեկել՝ նրանց ներկայացնելով իբրեւ յանցագործներ:

«Նպատակը այս բոլորի մէկն է՝ հասարակութեան, միջազգային կառույցների, ղէպերի իրական բնոյթին անտեղեկ մարդկանց մօտ տպաւորութիւն ստեղծել, թէ սպանուածները քրէաբանական բացասական բնութագիր ունեցող անձինք են, մի խօսքով՝ յանցագործներ են, եւ հենց յանցագործութիւն կատարելու ժամանակ էլ զոհուել կամ սպանուել են», - տարակուսեց Զհանգիրեանը:

Բացի այդ, նրա խօսքով, Կոնգրեսը, ծանօթանալով սպանութիւնների՝ նախաքննական մարմինի կողմից ներկայացուած նկարագրութեանը, եկել է եզրակացութեան,



Կոնգրեսի պետաիրաւական յանձնախումբի նախագահ Գագիկ Զհանգիրեան

որ նախաքննական մարմինը կարծես կարողացել է հիմնականում վերականգնել, թէ ինչ է եղել մինչեւ սպանութիւնները, պարզել է գրեթէ բոլոր սպանուածների գտնուելու վայրը, նրանց կողքին անմիջականօրէն գտնուած անձանց, նրանց շարժման ուղղութիւնը եւ այլն: Մեծամասամբ բացառապարտուած է նաեւ ղէպերի ընթացքը սպանութիւններից յետոյ. վիրաւորին կամ մահացածին ովքեր, ում մեքենայով եւ ուր տեղափոխեցին:

«Բայց բուն սպանութեան գործողութիւնը՝ կրակոցի ուղղութիւնը, կրակոցի անձը՝ առանց բացառութեան բոլոր տարր ղէպերում այդպէս էլ ոչ ոք չի տեսել, ոչինչ չի կարողացել ասել», - յայտարարեց նախկին գինդատախազը՝ շարունակելով. - «Մի անբեւեռութիւն ուժ թէ՛ սպանուած քաղաքացիական անձանց կողքին անմիջական գտնուողներին, թէ՛ ոստիկանութեան սպայի ու շարքային համաժառանգողներին՝ բոլորին անխտիր, այդ պահին պարտադրել է նայել այլ կողմ, մի ուրիշ գործով զբաղուել: Եւ բոլորը միասին մի տարօրինակ գուճադիպութեամբ հենց այդ կարեւոր դրուագը չեն տեսել», - ասաց Զհանգիրեանը:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆ» ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱՅՐՈՒԵՐԸ

Եթէ Ընտրական օրէնսգիրքը չփոխուի, «Ժառանգութեան» խորհրդարանական խմբակցութիւնն ամբողջ կազմով մեծամասնական ընտրատարածքներում թեկնածուներ կ'ունենայ գալիք խորհրդարանական ընտրութիւններում, այս մասին յայտարարեց «Ժառանգութեան» պատգամաւոր Անահիտ Բախշեանը, «Հայաստանի հանրապետական կուսակցութեան» պատգամաւոր Սուքիաս Աւետիսեանի հետ բանավէճի ժամանակ:

Սուքիաս Աւետիսեանը հակադարձեց, առջարկելով «եթէ»-ներով չիտեսել, որովհետեւ Ընտրական օրէնսգիրքը չի փոխուել: Թէ ո՞ր ընտրատարածքում կ'առաջադրուի ինքը՝ Անահիտ Բախշեանը, դժուարանում է պատասխանել:

«Ես որտեղ էլ առաջադրեմ իմ թեկնածութիւնը, այնտեղի ժողովրդին կ'ասեմ՝ «ո՞վ է ձեր պատգամաւորը եւ այդ ոչինչ չարած պատգամաւորի մօտ իմ արած գործը ցոյց կը տամ եւ կ'ասեմ, թէ ինչ եմ անելու արդէն այդ տարածքի համար», - իր հետագայ մարտավարութիւնը ներկայացրեց Բախշեանը:

Ըստ պատգամաւորի՝ Ընտրական օրէնսգիրքը փոփոխելը քաղաքական կամք է եւ այդ կամքը պէտք է ցուցաբերի երկրի նախագահը:

Անահիտ Բախշեանի համար ամենաբարձր ֆինանսական ռեսուրսների խնդիրն է: Սակայն առանց դրա էլ «Ժառանգութիւնում» վստահ են, որ արդար ընտրութիւնների ղէպքում իրենք կը յաղթեն ամենուր:

Համամասնական-մեծամասնական ընտրակարգերից բացի բանախօսներն անդրադարձան հարցին, թէ ով որքան մանդատ կ'ունենայ ապագայ խորհրդարանում:

ՀՀԿ-ական Սուքիաս Աւետիսեանը համոզմունք չայտնեց, որ իր կուսակցութիւնը յաջորդ գումարման խորհրդարանում կ'ունենայ ոչ պակաս տեղեր, քան ունի հիմա: Չնայած վստահութեանը, որ իրականում կը յաղթի ՀՀԿ-ն, Սուքիաս Աւետիսեանը մեծամասնական ընտրակարգով մէկ անգամ եւս առաջադրուելու ցանկութիւն չունի:

«ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՆՑՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»

Հայաստանի իշխանութիւնները ցանկանում են, որպէսզի ընդդիմութեան ներկայացուցիչները պատգամաւորական մանդատներ ստանան Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում, այս մասին լրագրողներին ասաց քաղաքագէտ Էդգար Վարդանեանը:

«Պատճառն այն է, որ իշխանութիւնը հասկանում է, որ եթէ ընդդիմութեան ներկայացուցիչները լինեն խորհրդարանում, կը նշանակի որ Հայաստանում քաղաքական սուր ճգնաժամ չկայ», - ասաց նա:

«Սա հնարաւորութիւն կը տայ միջազգային հանրութեան առջեւ

ներկայանալ այնպէս, որ մենք ավտորիտար չենք, ընդհակառակը՝ բարեփոխումների կողմնակից ենք: Իսկ խորհրդարանում ընդդիմութիւնը փոքրամասնութիւն կը կազմի եւ կարեւոր հարցերի վրայ մեծ ազդեցութիւն չի կարողանայ ունենալ», - բացատրեց Էդգար Վարդանեանը:

Ըստ քաղաքագէտի՝ առաջիկայ ընտրութիւնների արդիւնքում խորհրդարանում անցած ընդդիմադիր ուժերը կը կարողանան միայն հարցեր բարձրացնել, ելույթներ ունենալ եւ օգտագործել մոնիտորինգի անցկացման նպատակով գերատեսչութիւններ մտելու իրենց մանդատը:

ՍԿՍԵԼ ԵՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԱՑՆԵԼ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Մի քանի օր է՝ «Առաւօտը» ահազանգեր է ստանում այն մասին, որ ԱԺ հանրապետական պատգամաւոր Աշոտ Աղաբաբեանի Գիւմրիի գրասենեակի աշխատակից Եւաչան սկսել է ցուցակագրել բուժօգնականների աշխատակիցներին: Տեղի ունեցած ժողովներից մէկի ժամանակ Եւաչան հրամայել է Հանրապետական կուսակցութեան անդամագրուելու համար նախատեսուած հայցադիմումների ձեւերը: Առողջապահութեան վարչութեան պետ Յովհաննէս Յովհաննիսեանն էլ, մէկական օրինակ յատկացնելով հիւանդանոցների տնօրէններին, պարտադրել է, որ օրինակները բազմացնեն ու բաժանեն աշխատակիցներին:

Ըստ ներկայացրածի՝ իւրաքանչիւր բուժօգնականից թիւ է պահանջուել հոգեբուժարանի եւ ինֆեկցիոն հիւանդանոցների, ու ուղեքառնական դիսպանսերի տնօրէնները 40 ապագայ հանրապետական են խոստացել, աւելի քիչ աշխատակիցներ ունեցողները, օրինակ, ասենք՝ մարզային հիւանդանոցի տնօրինութիւնը՝ մի քիչ պա-

կաս: Ի ղէպ, ահազանգող բժիշկները ոչ մի կերպ չհամաձայնեցին իրենց անուն-ազգանունները հրապարակել, առողջապահութեան վարչութեան հետ խնդիրներ չունենալու պատճառաբանութեամբ: Նրանք մեզ նաեւ տեղեկացրին, որ հանրապետականացման գործընթացը սկսուել է 2 ամիս առաջ, բժիշկներին պարտադրել են կուսակցութեան շարքերը մտնելու համար մինչեւ Դեկտեմբերի 5-ը դիմում ներկայացնել, վերջիններս ներկայացրել են, սակայն անդամատոմս դեռ չեն ստացել: Նույնիսկ նախատեսուել էր անդամատոմսերը հանդիսաւոր ձեւով յանձնել Դեկտեմբերի վերջին, սակայն ինչ-ինչ պատճառներով չեստաձգուել է:

Մեր գրուցակիցների խօսքերով, շուտով իրենց ասածի ճշմարտութիւնը կ'ապացուցուի, մի մեծ «չոռ» կը կազմակերպուի, ու անդամատոմսերը ցուցադրաբար կը յանձնուեն, բնականաբար կը յայտարարուի, որ բժիշկներն իրենց ցանկութեամբ են անդամագրուած ՀՀԿ-ին:

ՆՇՈՒԵԼ Է ԱՍԱԼԱ-Ի ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 37-ՐԴ ԱՄԵԱԿԸ

Յունուարի 20-ին Առնօ Բաբաջանեանի անուան համերգասրահում, տեղի է ունեցել միջոցառում նուիրուած Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ-ի) հիմնադրման 37-ամեակին:

Հայաստանի Հանրապետութեան օրհներգից յետոյ բացման խօսքով հանդէս է եկել «Ուխտ Արարատի» հայրենասիրական հասարակական նախաձեռնութեան խորհրդի անդամ, բժշկական գիտութիւնների թեկնածու Հրանդ Աշճեանը:

Ապա ԱՍԱԼԱ-ի նահատակների յիշատակին յայտարարուել է լուծութեան բոլոր յետոյ հանդիսատեսը հնարաւորութիւն է ունեցել ծանօթանալու Գուրգէն Եանիկեանի խօսքով համեմուտ տեսագրութեանը:

ԱՍԱԼԱ-ի պատմութիւնը համառոտ ներկայացրել է «Երկաթէ շերտի», «Սփիւռք» պարբերականների խմբագիր, պատմական գիտութիւնների թեկնածու Գէորգ Եագճեանը:



ԱՍԱԼԱ-ի դերը հայ իրականութեան մէջ ներկայացրել է բանասիրական գիտութիւնների թեկնածու, գրականութեան պետական թանգարանի տնօրէն Կարօ Վարդանեանը:

Ելույթ է ունեցել նաեւ գրականագէտ, հրապարակախօս, «Հայերի դատը Փարիզում» գրքի թարգմանիչ եւ կազմող Գրիգոր Զանիկեանը:

**ԼՈՒՐԵՐ**

**«ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ՊԵՏՔ Է ՃԱՆԱԶԻ ԶԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐՑՈՒՄ ԻՐ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ»**

Գերմանիայի Բունդեսթագի Մարդու իրավունքների եւ հումանիտար օգնությունների լանձնատիրու վոլմ «Ձախ» կուսակցության խմբի ղեկավար Աննեթե Գրոթի «News.am»-ի թղթակցի հետ գրոցում ներկայացրել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի մասին իր տեսակետը:



**Բունդեսթագի անդամ Աննեթե Գրոթի**

«Գերմանիայի «Ձախ» խորհրդարանական խմբակցությունն արդէն բաւական երկար տարիներ է, ինչ սուր քննադատում է Թուրքիայի կառավարության քաղաքականությունը: «Ձախ» խմբակցությունն ամէն կերպ ջանում է նպաստել Թուրքական քաղաքականության ժողովրդավարացմանն ու Հայաստանի եւ Թուրքիայի հաշտեցմանը: Խմբակցությունը քննադատում է Թուրքական կառավարության որդեգրած վերաբերմունքը Օսմանեան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության մասին: Միայն այն դէպքում, երբ Թուրքիայի կառավարությունը ներողություն կը խնդրի Օսմանեան կայսրության ժամանակ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության համար, այդ դէպքում կարող է հայ ժողովրդին բաժին հասնել արդարությունը: Առանց արդարության դժուար կը լինի հաշտեցում երկու երկրների միջև»:

«Ձախ» խմբակցության համար կարեւոր է, որ Գերմանիայի Բունդեսթագը եւս ճանաչի Հայոց ցեղասպանության հարցում Գերմանական կայսրության (Գերմանական Ռայխի) պատասխանատվությունը: Մենք կարծում ենք, որ Գերմանիան պէտք է որ հաշտության լաւ օրինակ ծառայի եւ բացէի բաց ներողություն խնդրի այն ժամանակուայ գերմանական կայսրության կառավարական չինովնիկներին ու սպանների կողմից ցեղասպանության աջակցության եւ գիտակցաբար թուլտուտության համար:

Մենք այն համոզմունքին ենք, որ Թուրքական հասարակության մէջ պատմության քննադա-

տաբար վերանայումը կարեւոր նախադրեալ է, որպէսզի այսօրուայ Թուրքիայում հնարաւոր լինի այլ քաղաքականութիւն վարել փոքրամասնութիւնների հարցում: Ինչ է տեղի ունենում այսօր Թուրքիայի քրդաբնակ տարածքներում: Օր օրի ոտնահարում են մարդու իրավունքները քրդաբնակ շրջաններում: Ես այն կարծիքին եմ, որ ոչ միայն Ֆրանսիան, այլեւ Եւրամիութիւնը պէտք է խիստ քննադատաբար մօտենայ այս հարցին:

Մենք սպասում ենք, որ եւրոպական բոլոր երկրներն իրենց գաղութային պատմության, եւ դրանից հետեւող պատասխանատվության հետ զբաղուեն: Եւրամիութեան գրեթէ բոլոր երկրներում գոյութիւն ունի ինքնասահմանափակում, որը թոյլ չի տալիս վերանայել Եւրոպայի գաղութային պատմութիւնն ու ներողութիւն խնդրել, ուղղել սխալները՝ այդ պատմութեանը դէմ յանդիման կանգնածների ու նրանց ժառանգների հանդէպ:

Ինչպէս մենք Թուրքիայից սպասում ենք, որ վերջինս կանգնի իր պատմության առջեւ, այնպէս էլ մենք Գերմանիայում հանդէս ենք գալիս նրա օգտին, որ Գերմանիան քննադատաբար վերանայի իր պատմութիւնը:

Մենք համոզուած ենք, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության գիտակցելը այն հիմնական կարեւոր պայմանն է, որը կը նպաստի ժողովրդավարական աւանդույթների գարգացմանը եւ պատմութիւնից դասեր սերտելուն»:

**ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ  
ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԵՆ ԾԱՅՐԱՅԵՂ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԵՆ ԶՐԱԺԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**



**Ալիեւ, Մետվետե եւ Սարգսեան Սոչիի մէջ կայացած հանդիպման ընթացքին**

Սոչիի մէջ Ռուսաստանի նախագահին մասնակցութեամբ եւակողմ հանդիպման ընթացքին, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները յայտարարած են ծայրայեղ դիրքորոշումներէն հրաժարելու եւ իրենց դիրքորոշումները մերձեցնելու ջանքերը շարունակելու անհրաժեշտութեան մասին, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի այս խօսքերը կը փոխանցէ «Ռիա Նովոստին»:

«Կողմերը ընդհանուր ըմբռնում արձանագրած են, որ հետագայ յառաջընթացին համար, անհրաժեշտ է, ինչպէս արտայայտած են Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները, Տմիթրի Մետվետեւի աջակցութեամբ, ետ կանգնիլ ծայրայեղ դիրքորոշումներէ», - հանդիպման աւարտէն ետք լրագրողներուն ըսած է Լաւրով:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարին խօսքերով Սարգս-

եան-Ալիեւ-Մետվետե հանդիպումին քննարկուած է «Այն ամբողջ հարցերը, որոնք առայժմ չեն համաձայնեցուած, կը մնան Լեռնային Ղարաբաղի խնդրին կարգաւորման հիմնական սկզբունքներու նախազիծին մէջ»:

Նախագահները նաեւ «կարծիքներ փոխանակած են յատկապէս բարդ հարցերուն շուրջ, եզրակացութիւն եղած է այն, որ աշխատանքը պէտք է շարունակել», - աւելցուցած է Լաւրով:

Հանդիպման մասնակիցները պատրաստակամութիւն յայտնած են արագացնել աշխատանքը ընդհանուր սկզբունքներուն վրայ, որպէսզի յետոյ այդ հիմքին վրայ անցնին իրաւական առումով պարտաւորեցնող խաղաղութեան համաձայնագրին», - եզրափակած է ՌԴ ԱԳՆ-ը՝ վերահաստատելով, որ Ռուսաստան կը շարունակէ ջանքեր գործադրել կողմերու դիրքորոշումներուն մերձեցման ուղղութեամբ:

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕՂԱՆԱԲԱԿԱՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ  
ՕՐԸ ԿՐԿԻՆ ԶԻ ՆՇԻՈՒՄ**

Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանը Յունուարի 24-ին այցելել է Ստեփանակերտի օդանաւակայան, տեղում ծանօթացել իրականացուող աշխատանքների ընթացքին եւ անցկացրել խորհրդակցութիւն օդանաւակայանի վերագործարկման հետ կապուած հարցերի շուրջ:

2011 թուականին կատարած աշխատանքների մասին զեկոյցներով հանդէս են եկել քաղաքացիական աւիացիայի վարչութեան պետ Դմիտրի Աղբաշեանը, վարչութեան եւ օդանաւակայանի պատասխանատու աշխատակիցները:

Բակո Սահակեանը գոհունակութիւն է յայտնել իրականացուած աշխատանքների կապակցութեամբ եւ յաւելել, որ այս տեմպեր-

ըր ու որակը պէտք է պահպանուի այսուհետ եւս: Նախագահը նշել է, որ օդանաւակայանը մեր հանրապետութեան ռազմավարական կարեւորագոյն նշանակութիւն ունեցող օբեկտներից է, որի վերագործարկումը մեծապէս կը նպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Երկրի ղեկավարն ընդգծել է, որ բոլոր աշխատանքները պէտք է իրականացուեն անթերի եւ սահմանուած ժամկէտներում:

Ինչպէս երեւում է Արցախի նախագահականի տարածած հաղորդագրութեան մէջ, Ստեփանակերտի օդանաւակայանի բացման ժամկէտները գոնէ հասարակութեան համար կրկին մնում են անորոշ:

HayNews.am

**«ԻՐԱՆԻ ԴԵՍ ՌԱԶՄԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ  
ԻՐԱՆՑԻՆԵՐՈՒ ՄԵԾ ԶՈՍՔ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ ԴԵՊԻ  
ԶԱՅԱՍՏԱՆ».** ԿԸ ԳՐԷ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԵՐԹԸ

Իրանի շուրջ իրավիճակի լարման հարցով գերմանական «Deutsche Welle»-ը յօդուած հրատարակած է, ուր կը նշուի, որ հնարաւոր պատերազմի պարագային կը սպասուի հոսք դէպի Հայաստան, եւ որպէս հետեւանք հայաստանեան անշարժ գոյքի շուկային մէջ գիներու աճ պիտի արձանագրուի:

Կը նշուի, որ Հայաստան իրանի անմիջական հարեւանն է, որուն հետ «ունի լաւ ու բարեկամական յարաբերութիւններ»:

«Աւելին, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի կողմէ շրջափակուած Հայաստանի համար իրանը հիմնական ելքն է դէպի արտաքին աշխարհ», - կը գրէ յօդուածագիրը:

Ըստ «Deutsche Welle»-ի Երեւան անհանգստացած է, քանի որ

Իրանի դէմ ռազմական գործողութիւնը կը յանգեցնէ Հայաստանի համար կենսական նշանակութիւն ունեցող շարք մը ուժանիւթի եւ հեռահաղորդակցական խոշոր նախազիծերու տապալման:

«Առաջին հերթին՝ այդ երկու երկիրներուն միջեւ երկաթուղիի կառուցումն է, որուն շնորհիւ Հայաստան Պարսից ծոց ելք կը ստանայ, ինչպէս նաեւ իրան-Հայաստան քարիւղատարի եւ Արաքս սահմանային գետի վրայ երկու ջրանլեկտրակայաններու կառուցումը: Այս նախազիծերու իրականացումը նախատեսուած է ամենամօտ ժամանակներուն: Սակայն ստեղծուած իրավիճակին մէջ Իրան կրնայ արագացնել այդ ծրագիրներուն իրականացումը», - կը գրէ Թերթը:

**ArmenienInfo.net**  
News. Informationen. Kommentare.

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՍՈՒՐԻԱ ԿԸ ՊԱԽԱՐԱԿԵ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Դամասկոսէն ստացուած լուրերուն համաձայն Սուրիա պախարակեց Արաբական Լիկայի այն առաջարկը, որով խողաղութիւն հաստատելու համար Հանրապետութեան նախագահը պէտք է հրաժարի եւ իր պաշտօնը յանձնէ իր փոխանորդին:

Արդարեւ այս մերժման որոշումը հաղորդուեցաւ սուրիական ՄԱՆԱ լրատու գործակալութեան կողմէ, աւելցնելով որ նման միջոցառում մը ներհակ է երկրի գերիշխանութեան: Նշենք նաեւ որ Սուրիոյ նախագահ Պաշար էլ Ասատ մերժած է ճանչնալ իր քաղաքական ընդդիմադիրները և երկխօսութեան նստիլ անոնց հետ:

Միևս կողմէ Սէուտական Արաբիա եւ Քաթար սկսած են իրենց ճնշումները զորացնել Սուրիոյ վրայ, սպառնալով իրենց ներկայացուցիչները ետք քաշել Արաբական Լիկայի Դէտերու յանձնարումքէն:

ՓՈԹՈՐԿՈՏ ՆԻՍՏ ԵԳԻՊՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Վեց տասնամեակներէ ի վեր Եգիպտոսի մէջ կայացած առաջին Դեմոկրատական ընտրութիւններէն ետք երկրի ազգային ժողովի անդամնիկ նիստն անցաւ փոթորակալի միջնորդութիւն մը մէջ: Խորհրդարանէն ներս տիրապետող դարձած է իսլամիստ համախմբումի անդամները, որոնց անդամներն ու այլ ցուցարարներ իրարու բախած են ստեղծելով քառասպիտ վիճակ: Խորհրդարանի խօսնակ ընտրուած է մահմետական եղբայներու անդամ Սաստ էլ Քաթարի 399 թեր եւ 97 դէմ քուէներով: Այս առթիւ նորընտիր խօսնակը յայտարարութեան մը մէջ նշած է «Այս է դեմոկրատիան, որ լքեալ վիճակ մը ունէր տարիներէ ի վեր: Ներկայիս ժողովուրդը տէրն է անոր: Կ'ուզենք որ Եգիպտոսն ու բովանդակ աշխարհն իմանայ որ մեր յեղափոխութիւն պիտի շարունակուի եւ մենք դադար պիտի չունենանք ու մեր աչքերը պիտի չի փակուին մինչեւ որ իրականութիւն դառնան յեղափոխութեան պահանջները»:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՉ Կ'ԸՆԷ

Շարունակուած էջ 1-էն

խախտման եւ Յեղասպանութեան հերքման քարոզչութեան միջոցաւ: Այս անգամ սակայն, Թուրքիոյ աշխարհաքաղաքական եւ սնտեսական սպառնալիքները չկարողացան կասեցնել ճիշդ որոշումի կայացումը», - աւելցուց Խաչատուրեան:

Այս Առթիւ ՀԱԽ-ի ատենապետը կոչ ըրաւ նաեւ նախագահ Պարաք Օպամային, որպէսզի յարգէ իր խոստումը՝ զօրավիգ կանգ-

նելու Հայկական Յեղասպանութեան ճանաչման: «Այժմ երբ աւելի մեծ թիւով երկիրներ կ'աջակցին Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ Ֆրանսայի կառավարութեան քաջարի կեցուածքի լոյսին տակ, ժամանակը եկած է որ, ազատ աշխարհի ղեկավարը եւ Գոնկրէսի անդամները պաշարին արդարութեան համար եւ Միացեալ Նահանգները ցայտուն օրինակ դառնայ՝ ժողովրդավարութեան եւ բարի կամեցողութեան», - եզրակացուց Սեւակ Խաչատուրեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

րու հասցէին իրենց քննադատութիւնը. - «2011 թուականի Հոկտեմբերին Եւրախորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը բանաձեւ ընդունեց Հայաստանի կողմէ ստանձնած պարտաւորութիւններու կատարման վերաբերեալ՝ արձանագրելով, որ 2008 թուականի Մարտի մէկի էջը վերջապէս կարելի է նկատել փակուած», - գրուած է Մարդկային իրաւանց Հսկիչի տեղեկագիրին մէջ, «անտեղի» որակում նկատելով Հայաստանի կառավարութեան տրուած այդ վստահութիւնը:

Միևս կողմէ, Ազատութեան Տուն կազմակերպութիւնը յայտարարեց որ, 2011 թուականի ընթացքին Հայաստանի ժողովրդավարութեան ու ազատութեան ոլորտէն ներս որեւէ նշանակալից քայլ չէ կատարուած: Իրաւապաշտպան կազմակերպութեան հրապարակած գեկոյցին մէջ, տասերորդ տարին ըլլալով Հայաստան դասուած է «մասամբ ազատ» երկիրներու շարքին:

Ըստ Ազատութեան Տունի, մասամբ ազատ երկիրները անոնք են, ուր բաւարար չարգանք չի դրսեւորուիր քաղաքական իրաւունքներու ու քաղաքացիական ազատութիւններու նկատմամբ, օրէնքի իշխանութիւնը թոյլ է, ու հակառակ որ բազմակարծութեան որոշակի մակարդակ կայ, այնուհանդերձ,

քաղաքական դաշտի վրայ կը գերիշխէ ընդամէնը մէկ կուսակցութիւն:

ԼԻՊԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՄԸ ՎԵՐԱԳՐԱԴՈՒՄԸ ՍՈՒԱՄՍԱՐ ՔԱԶՁԱՖԻԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ

Լիպիոյ մայրաքաղաք Թրիփոլիէն ստացուած տեղեկութեանց համաձայն նախկին նախագահ Մուամմար Քադաֆիի գինեալ համակիրները վերջերս գրաւած են Պէնի Ուալիտ քաղաքը: Երկու կողմերու միջեւ տեղի ունեցած բուռն գինեալ բախումներու ընթացքին 4 հոգի մահացած է:

Արդարեւ, Լիպիոյ մայրաքաղաք Թրիփոլիի անցեալ Օգոստոսի անկումէն ետք Պէնի Ուալիտ քաղաքը նախորդ վարչակարգի կողմէ միջնաբերդի վերածուած էր: Ներկայիս վերստին սկսած է ծածանիլ նախկին վարչակարգի կանաչ դրօշը:

Միևս կողմէ կ'իմանանք թէ Քադաֆիի որդին Սէյֆ էլ Իսլամը մօտերս պիտի դատուի Լիպիոյ մէջ, որպէս պատերազմի ոճրագործ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՐԿԱԾԱՅԱՐ

Լիբանանի նախկին վարչապետ Սաստ էլ Հարիրի որ այս օրերուն Եւրոպա կը գտնուի, վերջերս Ֆրանսական Ալպեան լեռներուն մէջ դահուկով պարապելու ժամանակը իր սրունգը կոտրեց: Նախկին վարչապետն իսկոյն կը փոխադրուի Փարիզի մերձակայքը գտնուող Նէյրիլի ամերիկեան հիւանդանոցը: Վերաբուժական զոյգ գործողութիւններու ենթարկուելէ ետք, Հարիրի շաբաթ մը հիւանդանոց պիտի մնայ:

Յիշեցնենք որ Սաստ էլ Հարիրի իր կնոջ եւ երեք զաւակներուն հետ բնակութիւն հաստատած է Ֆրանսայի մէջ, մերթ ընդ մերթ այցելելով նաեւ Սէուտական Արաբիա: Ինք համակարգիչի վրայ «Թուրիթը» կայքէջը հաստատելով քննադատական ելոյթներ կ'ունենայ Հրգպալլա կուսակցութեան եւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի դէմ:

ԵՄԵՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ ՆԻՐ ԵՈՐՔ ԿԸ ՄԵԿՆԻ

Եմէնի Հանրապետութեան նախագահ՝ Շէյխ Ապտուլլա Սալէհ մայրաքաղաք Սանայէն Նիւ Եորք մեկնեցաւ դարմանուելու համար: Նախքան իր մեկնումը ներողութիւն խնդրեց իր ժողովուրդէն, իր իշխանութեան 33 տարիներու ընթացքին գործուած սխալներուն համար:

Ինչպէս ծանօթ է շուրջ տարի մը առաջ հարիւր հազարաւոր ցուցարարներ նախագահին հրաժարականը եւ երկրէն ներս դեմոկրատական կարգերու հաստատումը պահանջեցին:

ՄԱԿ-ի բանազնաց ժամալ Պանօմար այս առթիւ յայտարարութիւն մը կատարելով յայտնեց թէ Սալէհի ժամանակաւոր մեկնումը չի կրնար վերջ մը տալ Փետրուարին կայանալիք ընտրութեանց առթիւ ստեղծուած լարուած վիճակին:

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է

Շարունակուած էջ 2-էն

լարն է:

Յ. Գ. Առաջին հայեացքից այս հաշուարկները կարող են անհաւատալի թուալ, բայց հաշուարկների հիմքում կոնկրետ թուեր են դրուած: Որեւէ մէկը կասկածո՞ւմ է, որ Հայաստանի իշխանութիւնները (բոլոր օղակները միասին) տարեկան առնուազն 3 միլիարդ

տոլար են չուրացնում: Որեւէ մէկը կասկածո՞ւմ է, որ Հայաստանի ընդերքն անխնայ շահագործւում է, եւ գումարները երկրից դուրս են բերւում: Կամ որեւէ մէկը կասկածո՞ւմ է, որ մարդկանց 5 հազար դրամ ընտրակաշառք են բաժանում: Դէ եթէ չէք կասկածում՝ մնացածն արդէն պարզ թուաբանութիւն է: Թէկուզ՝ չինական կալուածատիրութիւն:

Կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Մ.ի Տիկնաց Միութեան

**Valentine's Dinner Dance**

Տեղի կ'ունենայ  
Երեքշաբթի 14 Փետրուար, 2012  
Երեկոյեան ժամը 7:30-էն սկսեալ

Mirage Banquet Hall-ի մէջ  
12141 Victory Blvd, N. Hollywood

Մուտքի ցուէր ցեղարեալ խմիչք՝ \$ 60.00

Տոմսերու քանակը փոփոխելու համար 626-485-6434 թիւին:

# ԵՐՈՊԱ ՄՏՆԵԼ ՈՒՋՈՂ ԹՈՒՐՔԻԱՆ

## ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Ամէն ազգի մէջ կան լաւեր ու գէշեր, ազնիւ եւ ոչ-ազնիւ մարդիկ: Թուրքին մէջ ալ կայ, ի հարկէ, եւ լաւը, եւ ազնիւ մարդը:

Սխալ է Թուրքի դէմ դիրքորոշուիլ պարզապէս անոր թրքութեան պատճառաւ:

Ազգամոլութեամբ ուղղուող մարդիկ վնասակար կ'ըլլան թէ իրենց ազգին եւ թէ ալ մարդկութեան:

Թունդ ազգասիրութիւնը կը սրէ մարդուն մէջ եսակեդրոն եւ եսապաշտ ապրելու գագոցները, եւ այդպէսով, կը թունաւորէ անոր մէջ մարդկայնօրէն ապրելու վեհանախնայութիւնը:

Իրենց ազգամոլութեամբ ու ցեղապաշտութեամբ հուշակաւոր մարդիկ, ինչպէս Թալաթ-էնվէր-ձէմալ երրեակը, Հիթլէրն ու Մուսօլինին, Ֆրանքօն եւ Սայազարը, մահ ու սարսափ սիրեցին իրենց շուրջը, եւ նոյնիսկ իրենց պատկանած ազգերուն ցաւի ու գուլումի պատճառ դարձան: Հետեւաբար, ցեղապաշտութիւնը մերժելով եւ շինիչ ազգասիրութեամբ ուղղուելով, պէտք է գիտնանք զանազանել լաւ ու ազնիւ Թուրքը՝ գէշն եւ ոչ-ազնիւ Թուրքէն:

Հայատեաց Թուրք ազգամոլին ու ցեղապաշտին սոցիալութեանն ամբողջ գիտակից ու մարդասէր ազնիւ Թուրքեր էին անոնք որոնք Հրանդ Տինքի յուղարկաւորութեան մասնակից եղան «Բոլորս Հրանդ Տինք ենք, բոլորս հայեր ենք» գոչելով:

Այս յառաջաբանէն մեկնած, եւ գուտ Թրքատեացութեամբ չմղուած ու լոկ իրապաշտութեամբ գինուած, կը ներեմ ինքզինքիս խստօրէն արտայայտուիլ ընդդէմ անցեալի եւ ներկայի Թուրք ազգայնամոլներու դէմ, եւ անոնց նեղմիտ իշխանական կամ պետական խաւ կոչուող ներկայացուցիչներու դէմ, որոնք Եւրոպա մտնել կ'ուզեն, ցեխոտած անցեալի ցնցոտիներ հազած, եւ անպատիժ մնացած ոճրագործ հօր արիւնոտ ձեռնոցները հազած:

Ես եւ իմ նմաններու սերունդը, թոռները մօտաւորապէս հարիւր տարի առաջ իրենց հայրենական տուներէն, գիւղերէն ու քաղաքներէն տեղահան եղած արեւմտահայաստան կոչուող շրջանի հայերուն, մեր մտքի պատտաւին վրայ անջնջելի եւ անմոռանալի պատմութիւններ ու պատկերներ ունինք մեր տէտէ ու նէնէ կոչուող պաշտելիներէն:

Իմ նէնէս, որ իր ինը գաւակ-

ներն ու առաջին ամուսինը կորսնցուցած է աքսորի կամ «սէֆէր-պիրլիք»-ի ընթացքին, կը չիշեմ թէ ինչպէս ան, մանկութեանս օրերուն, նստած մեր տան խոհանոցի գետնին վրայ, ձիթապտուղի հատիկները քարով կը ջարդէր արցունքոտ աչքերով ու շատ ցաւալի երգեր կ'երգէր: Երբ կը հարցնէի իրեն թէ ինչու՞ կ'ուլար, կը պատասխանէր ըսելով, «Քու կորսուած ու մեռած ամուսնորդ համար կուլած եաւրոնս»:

Իսկ տէտէս, ամէն տարի Պէյրութէն Երուսաղէմ կ'երթար ոչ թէ որպէս ուխտագնացութեան գացող բարի հաւատացեալ, այլ որպէս դառնութեամբ լեցուած ամուսին, որ կ'երթար աքսորի «ճարաչ» գաղթականին մէջ սովէն մահացած իր առաջին սէրը եղող առաջին կնոջ չիշատակը յարգելու եւ անոր անյայտ գերեզմանը այցելելու:

Մայրս՝ նէնէիս եւ տէտէիս երկրորդ ամուսնութեան պտուղը, օրինակ մըն է մեր աննման նէնէներուն եւ տէտէներուն դէպի նոր վերածնունդ եւ վերականգնում տանող հսկայ ոստումին, որ «մանկութիւն չունեցող մարդիկ» աշխարհ բերին եւ մեզ հայօրէն ապրելու մղեցին ու դաստիարակեցին:

Այսօր, երբ Թուրք ազգայնամոլ սոցիալներ իրենց ծիծաղելի պատճառներով տակաւին կը փորձեն ուրանալ ոճիրը իրենց ազգայնամոլ հայրերուն, իմ եւ ինձ նմաններուն մտքի պատտաւին վրայ աւելի եւ աւելի ներկայութիւն կը դառնան մեր ցեղասպանուած, անիրաւուած ու ցաւատանջ նէնէները եւ տէտէները, եւ աւելի ու աւելի կը սրի ու կը զօրանայ մեր արդարութիւն պահանջող պայքարի կամքն ու կորովը:

Եթէ Թուրք ազգայնամոլները կը դժուարանան ընդունիլ իրենց ամօթալի եւ անմարդկային անցեալը, ես եւ իմ նմաններն ալ կը դժուարանանք ներել կամ մոռնալ մեր անցեալի սերունդին դէմ կատարուած ցեղասպանութիւնը:

Այստեղ մեծ դեր պէտք է խաղայ ու կատարելիք կարեւոր դեր ունի ողջ մարդկութիւնը որպէս իրաւարար ու դատաւոր:

Ահա թէ ինչու, քաղաքակիրթ կոչուող աշխարհի լաւագոյն ներկայացուցիչը, իր չէզոքութեամբ եւ անկողմնակալութեամբ հուշակաւոր՝ Ջուրիցերիան, ճիշդ ու կարող իրաւարարի դերով միանգամընդմիջտ վճռեց, թէ ուրանալ Հայկական ցեղասպանութիւնը համազօր է քրէական ոճիրի որ պէտք է պատժել բարձր տուգանքով եւ

բանտարկութեամբ:

Նոյն օրինակով, մարդկային իրաւանց ու քաղաքակրթութեան հիմնական օրրան, ասպետական Ֆրանսան, այս օրերուն կը հետեւի Ջուրիցերիոյ ազնիւ օրինակին, եւ Հայկական ցեղասպանութեան ուրացումը պիտի դարձնէ խիստ պատժելի:

Եւրոպա մտնել ուզող Թուրքիան չբաւեր որ ըլլայ հարուստ եւ հզօր:

Անոր «պապայութիւնը» իսլամ ու արաբ ժողովուրդներու մօտ, ինչպէս նաեւ անոր բարեկամութիւնը Արեւելքի եւ Արեւմուտքի հետ, վկայականներ են (Diplomas) անոր ազդեցազորական կարողութեան, սակայն անցագիր (Passport) չեն ապահովելու իր մուտքը քաղաքակիրթ աշխարհի ընտանիքի յարկէն ներս: Կու գայ այն օրը երբ Թուրքիան կը զգայ որ յաղթանակներ ուրիշի դէմ միայն չեն տարուիր, այլ կը տարուին ինքնաքննադատութեամբ, ինքնամաքրագործութեամբ եւ կորցրած պատուի որոնութեամբ:

Մարդկային նկարագրի ամենէն ազնիւ եւ ամենէն բարձր յատկանիշը կը նկատուի վեհօգի կեցուածքը այն անձին, որ կ'ընդունի իր գործած սխալը, եւ ներողութիւն կը խնդրէ ու կը յայտնէ իր սխալին պատճառաւ վնասուած կողմին կամ գոհին: Թուրքիան պէտք է լսէ ձայնը ազնիւ Թուրքերուն որ



կը պահանջեն իրենց պետութեանն ամօթալի անցեալի դատապարտումն ու Հայկական ցեղասպանութեան ճանաչումը:

Հայութիւնը, Հայկական ցեղասպանութեան Հարիւրամեակի սեմին, կ'ակնկալէ ու կը սպասէ որ Թուրքիան լսէ ու յարգէ իրաւարարի դերով հանդէս եկող մարդկութեան ձայնը, եւ ծիծաղելի պատճառաբանութիւններով, արարքներով, սահմանի փակումով կամ ժրնեւեան փրօթոքոյններով չփորձէ երեսը ծածկել եւ առջեւ փախիլ, ուրանալով ոճրագործութիւնն ու պատասխանատուութիւնը:

Հարիւրամեակէն առաջ կամ վերջ, Հայը պիտի շարունակէ կարչիլ իր սուրբ դատին, եւ իր ցաւատանջ ու ցեղասպանեալ նէնէներուն եւ տէտէներուն սուրբ չիշատակին առջեւ ծնկաչոք բայց վճռակամութեամբ գօրեղ ու գիտակից, պիտի շարունակէ պայքարը, կրկնելով բանաստեղծի խօսքերը, «Սրբազան լեռ պիտի հասնինք կատարիդ»:

Come & join us to watch the **SUPER BOWL 2012**

**SUPER BOWL XLVI**

**Sunday, February 5**  
@3:00 pm

1060 N. Allen Ave., Pasadena, CA  
Good Food, Great Atmosphere, Big Screen TV

**ATTENTION**

**HAVE YOU INVESTED IN DELTA PETROLEUM (DPTR)?**

If you or anyone you may know owns or may have owned stock in Delta Petroleum Corp. please contact the Yeghiayan Law Firm at (818) 242-7400, or at [research@yeghiayanlaw.com](mailto:research@yeghiayanlaw.com)

If you have ever invested in this company, please contact us today.

### ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՆԱԳԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՆՉԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄ



#### ՄԱՐԻԷՔ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՂԱՆԷՍ

Կիրակի, Յունուար 15-ին, կազմակերպվեց Գոլաֆոնի Պոլսահայ Միութեան եւ հովանաւորութեամբ 24 Ապրիլի Հայկական Միացեալ Մարմնի, նշուեցաւ հինգերորդ տարելիցը Պոլսոյ «Ակոս» թերթի գլխաւոր խմբագիր՝ Հրանդ Տինքի սպանութեան:

Երեկոն սկսաւ յայտնի տուտուկահար Ալպէրթ Վարդանեանի մեյքափ մեղեդիներով: Ներկայ էին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան, Վեր.



#### Ռաֆֆի Յովհաննիսեան

Յովսէփ Մաթոսեան, Դատախազ Զաւէն Սինանեան, 24 Ապրիլի Հայկական Միացեալ Մարմնի անդամներ, Հայաստանի Հանրապետութեան Ա. Արտաքին Գործոց Նախարար՝ մեծապատիւ Ռաֆֆի Յովհաննիսեան, Քոչը Միութիւններու ներկայացուցիչներ, Հայ Գրողներու Միութեան անդամներ, Իրաւաբաններ, Մամուլի ներկայա-

ցուցիչներ եւ Հրանդ Տինքի յիշատակը յարգողներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան որ հրաւիրեց ներկաները վայրկեան մը յոտնկայս յարգելու յիշատակը հանգուցեալ Հրանդին:



#### Փրօֆ. Թանէր Ագճամ

Տոքթ. Աւետիքեան հակիրճ բացատրութիւն տուաւ Հրանդի կեանքի, խիզախութեան, հայ եւ թուրք ազգերու մերձեցման հաւատքի եւ միասնաբար ապրելու գաղափարի եւ խօսքի ազատութեան համար անոր տարած պայքարին մասին:

Ապա շնորհակալութիւն յայտնեց սոյն ձեռնարկը յաջողցնող բոլոր անձերուն: Հրաւիրեց օրուան հանդիսավար՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձական Մարմնի Վարչութեան ատենապետ՝ եւ Հայ Իրաւաբաններու Միութեան Կաճառի ատենապետ՝ Իրաւաբան Էտիլին Մինասեանը, որ ան ալ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ ձեռ-

### ՍՕՍԻ ՆԱԳԱՇԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ «ՄԱՅՐԵՆԻԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» Ի ՄՐՑԱՆԱԿԻՆ

Մեծ ուրախութեամբ տեղեկացանք որ Սօսի Նագաշեան, «Հայապահպանման աշխատանքին ներս իր ունեցած նշանակալի աւանդին համար», 2011-ի համահայկական մրցանակաբաշխութեամբ, արժանացած է «Մայրենիի լաւագոյն ուսուցիչ» անուանակարգի II կարգի մրցանակի եւ I կարգի վկայականի:

«Մայրենիի լաւագոյն ուսուցիչ» մրցույթը կազմակերպուած է նկատի ունենալով հայերէն լեզուի դասաւանդ ուսուցիչներու նուիրական առաքելութիւնը՝ արտերկրի մէջ հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան, ուժացման դէմ պայքարի, ինչպէս նաեւ ազգային ինքնութեան եւ հայկական ոգիին հաւատարիմ մատղաշ սերունդներ դաստիարակելու, 21-րդ դարու դժուարին պայմաններուն ներքոյ: Մրցույթին նպատակն է խրախուսել ազգային նուիրական այդ առաքելութեան լծուած սփիւռքահայ ուսուցիչ-ուսուցչուհիները, ներկայացնել ու տարածել անոնց մասնակաւարժակներ եւ մասնագիտական վաստակը, միեւնոյն ժամանակ բարձրացնելով նաեւ հայերէն լեզու դասաւանդող ուսուցիչ-մանկավարժներու հեղինակութիւնը: Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան եւ Համաշխարհային Հայկական Գոնկրէսին կողմէ սահմանուած այս՝ «Մայրենիի լաւագոյն ուսուցիչ» մրցույթին կրնան մասնակցել սփիւռքի մէջ գործող ամէնօրեայ կամ միօրեայ կրթօճախներու, ինչպէս նաեւ արտերկրի հայկական կազմակերպութիւններու կամ եկեղեցական կառույցներուն կից կեանքի կոչուած՝ հայերէն լեզուի դասաւանդ-



ման ծրագիրներուն զինուորագրուած բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիները: Տիկին Նագաշեանին մրցանակի արժանանալու բարեբաստիկ լուրը իրեն հաղորդուած է մրցույթի համահայկական ծրագիրներու վարչութեան պատասխանատու եւ յանձնաժողովի նախագահ, գիտակրթական ծրագիրներու բաժնի պետ՝ Տիկին Սիրվարդ Համբարեանի կողմէ ուղարկուած շնորհաւորագրով: Սօսի Նագաշեան՝ մայրենի լեզուի բազմամեայ եւ բազմավաստակ, խոր համոզումներու տէր ու նուիրեալ ուսուցչուհի, կը պաշտօնավարէ Գանատայի Լավալ քաղաքի Նարեկ երկրորդական վարժարանէն ներս:

Սրտագին շնորհակարարութիւններ:

Թ.Ղ.ԱԿԻՑ

նարկը կազմակերպողներուն, ինչպէս նաեւ հեռուստատեսիլի տեղական եւ թրքական կայաններու պատասխանատուներուն, որոնք օրուայ յայտագիրը կը սփռէին: Հրաւիրեց Տէր Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեանը որ ընթերցեց Արեւմտեան Ամերիկայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ուղարկած Օրհնութեան Գիրը, որուն մէջ կը շնորհակալութիւն յայտնէր Հրանդ Տինքի Պոլսահայոց նահատակը չէ միայն, այլ՝ համայն հայութեան, մարդկային իրաւունքներու համար պայքարող բոլոր ժողովուրդներու նահատակը: Հանդիսավարը իր խօսքին մէջ յայտնեց թէ Տինք գոհը եղաւ ստեղծութեան եւ մոլեռանդութեան,

ճշմարտապէս սիրեց իր ծննդավայրը, իր առաջնակարգ մտահոգութիւնը ըլլալով տեղահանուածի, բռնաբարձման ինչպէս նաեւ հայ ժողովուրդին իրենց հողերէն նիւթական միտումի ճանաչումը, նպատակակէտ ունենալով փոխադարձ խօսակցութեամբ համաձայնութեան մը յանգիլ Հայ եւ Թուրք ազգերու միջեւ:

Ան հրաւիրեց մեծապատիւ Ռաֆֆի Յովհաննիսեանը որ ի սրտի կանչը ըսէ: Ան յայտնեց թէ հայ ժողովուրդը հարիւր տարի առաջ ոչ միայն կորսնցուց պատիւ, այլ՝ մի ողջ քաղաքակրթութիւն,

Շար.ը էջ 18

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>- Life Insurance</li> <li>- Health Insurance</li> <li>- Group &amp; Individual</li> <li>- Long Term Care</li> <li>- Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>- Estate Planning</li> <li>- Will &amp; Living Trust</li> <li>- Full Annual Review</li> <li>- Mortgage Protection</li> <li>- College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>- Workman's Compensation</li> <li>- Employee Benefits</li> <li>- Annuity</li> <li>- IRA</li> <li>- 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

### ԿԵԱՆՔԸ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ



#### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԱՅՅԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի նորրոնտիր Առաջնորդ Արհիպատիւ Միքայէլ Եպս. Մուրատեան, Գալիֆորնիա կատարած իր հովուապետական այցելութեան ընթացքին նաեւ այցելեց Հայ Քոյրերու Վարժարան:

Երկուշաբթի, Դեկտեմբեր 18, 2011ին առաւօտեան ժամը 9:30ին Միքայէլ Եպս. Մուրատեան ժամանեց վարժարան ընկերակցութեամբ Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկէ եկեղեցու ժողովրդապետ Գրիգոր Վրդ. Շահինեանի եւ փոխ-ժողովրդապետ Արմենակ Վրդ. Պետրոսեանի: Արհիպատիւ հիւրը դիմաւորուեցաւ աշակերտութեան, ուսուցչական կազմի, խորհրդատու եւ ծնողա-օժանդակ մարմիններու անդամներու կողմէ: Ան օրհնեց հայկական տարագրւած զոյգ մը աշակերտներու կողմէ ներկայացուած անանդական հացն ու աղը, ապա սրահէն ներս տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, ուր բարի գալուստի խօսք արտասանեցին վարժարանի տնօրէնուհի Առաքինազարդ Քոյր Լուսիա եւ շեշտելով Հայ Քոյրերու վարժարանի առաքելութիւնը ըսաւ. «... Մեր վարժարանի առաքելութիւնն է թրծել հայ մանուկը Աստուծոյ սիրով եւ մեր նախահայրերուն հաւատով եւ ապա ներմուծել անոր մէջ սէրը հայ լեզուին եւ հայ մշակոյթին հանդէպ»: Տեղի ունեցաւ զեղարուեստական յայտագիր, որուն մաս կազմեցին երրորդ դասարանին մինչեւ ութերորդ դասարանի աշակերտները, ներկայացնելով Ս. Ծննդեան երգեր ու ոտանաւորներ, նաեւ հայրենաշունչ երգեր եւ արտասանութիւններ, խանդավառ եւ տօնական ուրախ մթնոլորտ մը առաջացնելով սրահէն ներս:

Արհիպատիւ Միքայէլ Եպս. Մուրատեան իր պատգամը փոխանցեց աշակերտներուն: Ան վերակոչեց իր յիշատակները որպէս Հայ Քոյրերու վարժարանի աշակերտ, ուր վայելած է խնամքը ինքնամոռաց կոչներուն, որոնք իրենց օրինակով դարձած են ներշնչման աղբիւր իրեն եւ շատ մը ուրիշներու, որոնք այսօր կը գտնուին ազգը ղեկավարող դիրքերու վրայ, ապա յորդորելով աշակերտները, ըսաւ. «... Զինուեցէք ազգային եւ քրիստոնէական գոյգ «թեւերով» որպէսզի կարենաք յաջողութեամբ սաւառնիլ հայ ազգի

երկնակամարին վրայ»: Պաշտօնական հանդիսութենէն ետք Արհիպատիւ Գերապայծառը այցելեց դասարանները եւ մօտէն ծանօթացաւ դպրոցական առօրեային:

#### ՄԱՐԹԱՅԵԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Գիրքը խորագրում է՝ «Ճանապարհ դէպի ինքը քեզ», բանաստեղծութիւններ եւ արձակ էջեր, ծաւալը՝ 141 էջ, խմբագիր՝ Հայաստանի Գրողների Միութեան նախագահ՝ Լեւոն Անանեան, գեղեցիկ սպագրութիւն երեւանում, լաթակազմ, ՀԳՄ հրատարակչութիւն, սա հեղինակի չորրորդ գիրքն է հանդիսանում: Գրքի ուսալեզու եւ հայերէն թարգմանութիւնը հեղինակի կողմից որպէս նոր տարւայ նէր նւիրուց հանդիսականներին:

Գրքի ուսերէնից հայերէնի փոխանցումը կատարել է՝ դր. պրոֆ. Արտեմ Յարութիւնեանը՝ հարագատորէն բարձրարեւատ: Նա գրքի արժեւորող գեկուցաբերն էր հանդէսում հրաւիրած երեւանից հեղինակի կողմից:

Հանդէսի մեկնարկումը կատարեց երեկոյի հանդիսավար շնորհալի հաղորդավար եւ արեւստաբան Արշալոյս Դարբինեանը: Նա գեղեցիկ առողանութեամբ եւ հաճելի ձայնով ուսերէն եւ հայերէն լեզուներով ողջունեց հանդիսականներին, հակիրճ բառերով ներկայացրեց հեղինակի կենսագրութիւնը եւ գրական ժառանգութիւնը ասելով՝ «Նատելա Լալաբեկեանը ծնւել է Երեւանում, սովորել է Մոսկուայում, իսկ բնակում է Լոս Անջելէսում, արեւստաբան է՝ Հայաստանի եւ Մոսկուայի գրողների միութիւնների անդամ: Նա արժանացել է Ռուսաստանի հայերէնի միութեան մրցանակին եւ Միւլուքի նախարարութեան պատուոյ գրին», ապա նա մէջբերում Միւլուքեան քարտուղար՝ Տատեանա Կուչուկլեւայի գրութիւնից (գրքի յուշագրան) պատուով:



Հանդիսավարը բեմ հրաւիրեց ԿՀԳՄ նախագահ Գրիշ Դաւթեանին: Նա իր անգլերէն եւ հայերէն ողջոյնի խօսքում ասաց՝ «Ողջունում եմ ներկաներին, ԿՀԳՄ մեծապէս երախտապարտ է բանաստեղծուհի Նատելա Լալաբեկեանին, որովհետեւ նա հովանաւորում եւ սպագրութեան ամբողջ ծախսն է հոգում միութեանս եռամսեայ՝ «Բառ ու Բան» հանդէսը, շնորհակալ ենք իրենից»: Նա մեծարեալի մասին ասաց՝ «Նատելա Լալաբեկեանը շատ զգալուն բանաստեղծ է, գիրքը արժանի գրականութեան ստեղծագործութիւն է, նկատելով որ երեկոյին պիտի ներկայացրի, թողնեք նրա արեւստի վերլուծումը գեկուցաբերին»:

Հանդիսավարը ամբիոն հրաւիրեց հեղինակին:

Նա խօսում էր ուսերէն, կարկաչանոտ աղբիւրի պէս վարժ ու սահուն ապա ներկայացնում էր հայերէն թարգմանութիւնը կցկտուր: Նա ուսաց լեզուով է ուսանել, ապու պապերով հայկական սերնդաշառաւիղ:

Այստեղ բերում ենք նրա հայերէն խօսքից հարազատ մնալով մտքերին:

«Իմ գիրքը ճամբորդել է իմ ճակատագրի քաղաքներով՝ Երեւան, Մոսկուա եւ Լոս Անջելէս, շատ բարդ է ներկայացնել գիրքը Լոս Անջելէսում, նկատելով տարբեր լեզուներ, տարբեր համայնքներ: Գիրքը ծնւել է Երեւանում, բայց նախքան դա՝ գարգացել է Մոսկուայում, ապա ներկայացնում է Լոս Անջելէսում: Իմ գիրքը ներքին սահմանափակ ճանապարհ է... այլ նա աշխարհագրական սահմաններից դուրս է գալիս... նա իմ գրանթի ճանապարհ է... Մենք սովորում ենք ներել, մէկ-մէկ էլ մենք պէտք է լինենք շնորհակալ նրանց հանդէպ, որ մեր նկատմամբ անում են ինչ որ սխալ եւ մենք այդ մարդից սովորում ենք նաեւ ներել եւ այդպիսով գնում ենք առաջ: Խօսքը կեանքի մասին է, կեանքը չի տեղաւորում մի ժանրի, մի ոգու սահմաններում, նա դուրս է գալիս այդ ափերից, դրա համար ես խօսել եմ պոէտիկ լեզուով, կեանքը լի է ունանտիկ, գեղեցիկ, տխուր, դասական պոէզային ենթակայ պահերով: Գրքի վերջում ես գրել եմ

### ՄԵՐ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՅԱԳՆԸ. ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

1872թ-ի Յունուար 22-ին 21 տարեկանում մահացաւ հայ նոր գրականութեան առաջին խոշոր սիրերգակ Պետրոս Դուրեանը: Նա հեռացաւ Երազելով իր տաղերի փոքրիկ ժողովածուի «արեւ տեսնելը», հեռացաւ նոյնիսկ առանց լուսանկար ունենալու: Տամամեակներ շարունակ Սկիւտարի ազգային գերեզմանատանը՝ Պաղլար Պաշիի պողոտայի վրայ, Պետրոս Դուրեանի շիրիմը դարձել էր ուխտատեղի: Տղաներն ու աղջիկները նրա նուիրական գերեզմանի մօտ են շնջացել առաջին սիրոյ երգումները, ծերունիներն ու երիտասարդները երկիւղած համբոյր են դրոշմել բանաստեղծի մահարձանին, մարմարէ տապանաքարը ծածկուել է սքանչացումի աչքայիսի անպաճոյճ տողերով:

«Պաշտելի չիշատակիդ, ո՞վ Դուրեան նուիրական»:

«Կաթիլ մի արտոսը ի շիրիմ Պ. Դուրեանի»:

«Արցունքս եւ հառաչանքս չիշատակիդ, ո՞վ պաշտելի իմ Դուրեան»:

«Հանգիր ի շիրմաց՝ պարծանք քերթողաց»:

«Պետրոս Դուրեան, հանճար մեծ. պսակ քերթողաց Հայոց»:

«Հանգչի՜ր քերթող, ի շիրիմիդ,

Հանգչի՜ր ի սառ դամբանիդ, Հանգչի՜ր հոգի մեկամաղձ, Թող քեզ ատեն սիրտք նախանձ»:

Նա գրել է բանաստեղծութիւններ, դրամաներ, զբաղուել է հրապարախօսութեամբ, կատարել թարգմանութիւններ (Վիկտոր Հիւկո, «Թագաւորը գուարձանում է»), Շէքսպիր, «Մակբեթ» եւ այլն): 1869ին եւ 1871ին «Օրագիր ծին Աւարայրում», «Մեղր», «Յփրատ», «Մամուլ» պարբերականներում սպագրել է տաղեր: Դուրեանի թատերախաղերը նպաստել են հայ դրամատուրգիայի զարգացմանը: Նա գրել է «Տարագիր Սիպերիա» այլաբանական ողբերգութիւնը, «Վահան եւ Շուշան կամ Հովիւք Մասեաց» (1867) հովուերգական մեղոգրաման, ապա՝ «Սեւ հողեր կամ Յետին գիշեր Արարատյան» (1868), «Արտաշէս աշխարհակալ» (1869), «Անկումն Արշակունի հարստութեան» (1870), «Ասպատակութիւնք պարսկաց ի Հայս կամ Աւերումն Անի մայրաքաղաքին Բագրատուն-



եաց» (1870) պատմական ողբերգութիւնները: Անդրադարձել է հայոց պատմութեան այն անցքերին, երբ ժողովուրդն ազատագրական պայքարի է ելել օտար հրոսակների դէմ:

Դուրեանը հայ գրականութեան մէջ ստեղծել է ունանտիկական դրամային բնորոշ նմուշներ, որոնք, բացառութեամբ «Տարագիր ի Սիպերիա»ի եւ «Թատրոն կամ Թշուառներ»ի, հեղինակի կենդանութեան օրօք բեմադրուել են «Թանրոն Օսմանի»ում եւ մեծ յաջողութիւն ունեցել:

Դուրեան-քնարերգակի ձայնն ամբողջ ուժով հնչել է 1871-ին, իսկ մինչ այդ նա ստեղծել է առաւելապէս քաղաքացիական երգեր: Նրա քնարական ամենամեծ արժէքներն ստեղծուեցին կեանքի վերջին տարում: «Միրել»-ն ու «Դրժել»-ը, «Լճակ»-ն ու «Տրտունջք»-ը, «Թրքուհին» ու «Հեծեծմունք»-ը բոլոր ժամանակների հայ քնարերգութեան ամենաբարձր գագաթներն են:

Վ. Բրիւսովը ասել է նրա մասին «Պատանի Դուրեանը մնում է հայ պոէզիայի պատմութեան մէջ որպէս վառ, հրաշէկ շարիխ: Ի թիւս միւս, աւելի հանդարտ բանաստեղծների՝ նա ցոյց տուեց, թէ ինչ է նշանակում ստեղծագործութեան մէջ «աւիւնը»...: Իսկ Պարոյր Սեւակը Դուրեանին համարում էր «մեր քնարերգութեան Վահագնը»:

Յիշեցնենք, որ Պետրոս Դուրեանի գանգը, որը մարմնից առանձնացուել է 1959 թ. եւ պահուում է Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում, Մշակոյթի նախարարութիւնը պատրաստում է առաջիկայում այն գմուսել պատի մէջ:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----

Tel :----- Fax : -----

### ԳԵՈՐԳ ՎԱՐՂԱՆԵԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՆԸ ԶՈՐԶԻԼԻ, ՄՏԱԼԻՆԻ ԵՒ ՈՈՒԴՉՎԵԼՏԻ ԹԵՐԱՆԵԱՆ ԸԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բրիտանական «The Daily Telegraph»-ը յօդուած է հրատարակել 2012թ. Յունուարի 10-ին մահացած յայտնի խորհրդային հետախույզ Գեորգ Վարդանեանի մասին: Գեորգ Վարդանեանը մահացաւ 87 տարեկանում: Նա խորհրդային հետախույզութիւնում է աշխատել աւելի քան կէս դար եւ կարեւոր դեր է խաղացել 1943թ. Թեհրանի կոնֆերանսում Չըրչիլին, Ստալինին եւ Ռուզվելտին սպանելու նացիստական դաւադրութեան տապալման մէջ: Երեք դաշնակից տէրութիւնների առաջնորդները 1943թ. Նոյեմբերին հաւաքուել էին՝ քննարկելու Գերմանիայի դէմ պայքարի ռազմավարութիւնը: Օրակարգի գլխաւոր կէտը երկրորդ ճակատի բացումն էր Արեւմտեան Եւրոպայում: Գերմանիայի ռազմական հետախույզութեան ծառայութեանը՝ ԱՎ-Վեբին, կոնֆերանսի անցկացման վայրի եւ ժամանակի մասին յայտնի էր դարձել դրանից մէկ ամիս առաջ:

Արտահոսքը եղել էր ամերիկեան ռազմածովային ծածկագրի կտորներին սպանելու «Երկար ցատկ» անուանումով գործողութիւնը վստահուել էր գործակալ Օտտօ Սկորցենին:

Սակայն խորհրդային հետախույզ Նիկոլայ Կուզնեցովը, որը ներկայանում էր գերմանացի օբերլեյտենանտ Պաուլ Զիբերտի անուան տակ, սկսեց ընկերութիւն անել SS-ի շտաբմանֆիւրեր Ուլրիխ Ֆոն Օրտելի հետ, որն էլ անսթափ վիճակում Կուզնեցովին ասել էր, որ «Երկար ցատկի» համար յատուկ ջոկատները պատրաստութիւն են անցնում Կոպենհագենում:

Կոնֆերանսի անվտանգութեան համար գլխաւորապէս պատասխանատու էր ԽՍՀՄ-ը: 1921թ. Բարեկամութեան մասին ռուս-պարսկական պայմանագրի համաձայն՝ խորհրդային Միութիւնը 1941թ. Օգոստոսին գորքեր մտցրեց Հիւսիսային Պարսկաստան՝ գերմանացի գործակալների գործունէութիւնը կանխելու համար: Բրիտանական գորքերը վերահսկում էին երկրի հարաւը՝ ամերիկա-անգլիական լենդ-լիքի հոսքը Պարսից ծոցից ԽՍՀՄ ապահովելու համար:

Կոնֆերանսը («Էվրիկա» կոչւած յին անուանումով) անցկացուեց խորհրդային դեսպանատանը, որի շէնքերից մէկը դարձաւ ԱՄՆ նախագահ Ռուզվելտի նստավայրը, քանի որ ամերիկեան առաքելութեան շէնքը գտնուում էր արուարձանում եւ չէր համարուում անվտանգ: Խորհրդային եւ բրիտանական դեսպանատները բաժանող փողոցի տակով թունել էր անցկացուել: Այդ հատուածը խիստ հակողութեան տակ էր: Վարդանեանն աւելի ուշ յիշում էր. «Թեհրանն այն ժամանակ լցուած էր Եւրոպայից եկած փախտականներով: Նրանց մեծ մասը հարուստ մարդիկ էին, որոնք փորձել էին խուսափել պատերազմի ռիսկերից: Իրանում կային մօտ 20 հազար գերմանացիներ, եւ նրանց մէջ քողարկուած էին նաեւ նացիստական գործակալներ: Նրանց օգնում էր նախապատերազմական հովանաւորութիւնը, որը գերմանացիների համար ապահովում էր շիտ-լերին ծածուկ համակրող շահ Մո-

համեղ Ռեգա Փեհլեվին: Պարսկաստանում գերմանական դաշտային կէտը՝ Ֆրանց Մայերի գլխաւորութեամբ շատ հզօր էր»:

1940-1941թթ. Վարդանեանի խումբը՝ հետախույզութեան եօթ սպաներով բացառապէս է աւելի քան 400 նացիստական գործակալներին, որոնք ձերբակալուեցին խորհրդային գորքերի կողմից:

Ի վերջոյ, բացառապէս նաեւ Մեյերը, որը գերեզմանափոր էր աշխատում հայկական գերեզմանոցում: Նրան ձերբակալեցին բրիտանացիները: Կոնֆերանսի բացումից (1943թ. Նոյեմբերի 28) առաջ Վարդանեանի խումբը բացառապէս վեց նացիստական ռազիստների վայրը: Գերմանացի մարդասպաններին պարաշուտով նետել էին Թեհրանից 40 մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Կոմ քաղաքի մօտ. «Մենք հետեւեցինք նրանց Թեհրանում, որտեղ նացիստական դաշտային կէտը նրանց համար առանձնատուն էր նախապատրաստել: Նրանք գինուած էին եւ տեղաշարժուած էին ուղտերով: Մենք որսացինք նրանց ռազիստադրոպարութիւնները Պեռլինի հետ: Դրանցից մենք իմացանք, որ գերմանացիները պատրաստուած են Իրան ուղարկել նաեւ երկրորդ խումբը՝ հենց Սկորցենիի գլխաւորութեամբ: Նպատակը «Մեծ եռեակի» ոչնչացումն էր կամ առեւանգումը»:

Առաջին խմբի բոլոր անդամները ձերբակալուեցին: Նրանց ստիպեցին խորհրդային վերահսկողութեան տակ կապուել իրենց օպերատորի հետ: «Մենք ռազիստին յատուկ հնարաւորութիւն տուեցինք հաղորդել առաքելութեան ձախողման մասին: Եւ գերմանացիները որոշեցին Սկորցենիի հիմնական խումբը չուղարկել Թեհրան: Մեր խմբի յաջողութիւնը ձախողեց մահափորձը», - պատմում էր Վարդանեանը: Գեորգ Անդրեյի վարդանեանը ծնուել է 1924թ. Փետրուարի 17-ին Դոնի Ռոստովում: Նրա հայրը հաջ գործարար էր եւ 1930-ից մինչեւ 50-ականներին սկիզբը Պարսկաստանում աշխատել է խորհրդային հետախույզութեան համար՝ համակարգելով գործակալների ակտիւ ցանցը: Գեորգ Վարդանեանն աշխատանքի է անցել հետախույզութիւնում, երբ ընդամէնը 16 տարեկան էր: 1955-ին նա Երեւանում աւարտեց Համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետը: Երկար կարիերայի ընթացքում նա սկսեց ազատ խօսել ութ լեզուներով:

2003-ին գաղտնագրութեամբ փաստաթղթերի հիման վրայ Եռուրի Կուզնեցը գրեց «Թեհրան-43. «Երկար ցատկի» տապալումը» գիրքը, որը մանրամասն ներկայացնում է Վարդանեանի դերակատարութիւնը Թեհրանի կոնֆերանսում: Վարդանեանի աշխատանքի մեծ մասը գաղտնի է մնում մինչեւ այսօր: 2007-ին Մոսկուայում վարդանեանի հետ հանդիպեց Չըրչիլի թոռնուհին՝ Սելիա Սանդիսը: Այդ հանդիպման ժամանակ Վարդանեանը հայկական կոնեակով գաւաթ բարձրացրեց Ստալինի, Չըրչիլի եւ Ռուզվելտի համար՝ ասելով. «Հենց նրանց շնորհիւ մենք ապրում ենք հիմա»: Նա չիւնէր, որ Ստալինը Չըրչիլին հայկական կոնեակ էր ուղարկել:

### ԿԱՐԻՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ԿԱՐՄԻՐ, ՄՊԻՏԱԿ ԿԱՐԴԵՐ

Ես կ'ուզէի քեզից ստանալ սքանչելի մի ծաղկեփունջ՝ Կարմիր, սպիտակ, քնքուշ վարդերի, Կը դնեմ այն իմ սենեակի խուլ անկիւնում, Դեռու բոլոր շշուկներից աշխարհային, Ու չարախիմոյ հայեացքներից մարդկային Կարմիր, սպիտակ կոկոն վարդեր.... Ես կ'ուզէի՝ մեր փշրուած արա-

հետը սիրոյ Նորից լցուէր ձեր խելացնոր բուրմունքով, Կ'ուզեմ նաեւ, որ մեր հոգիներն իրար գտած, Յաւերժ ձուլուած ու միացած, Արբեմային ձեր բուրմունքով եղեմային. Ամնարմին ցնորքների ու երագների ծաղիկներ, Իմ կարմիր, սպիտակ վարդեր, Դոգուս մեղմիկ փարուած յոյսեր....

### ԱՂԵՐՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Տուր ինձ ապագայի հուր, որ կարողանամ շնչել օդն այս խիտ, Տուր ինձ քո հոգուց կայծեր, թող հրոյ ճարակ դառնամ, Միայն տուր ինձ հնարաւորութիւն, որ քեզնով լցուեմ ու ինձ հարուստ զգամ: Վերախնայաւորի իմ կենսախիմոյ հոգու ծալքերը, Ծայրեծայր ինձ կեանք դարձ-

րու՛, Ինձ ՍԵՐ դարձրու՛, Միթէ շատ բան եմ ուզում... չեմ կարծում, Պարզապէս ուզում եմ, այնքան շատ եմ ուզում Որ այս աշխարհի գեղեցկութիւնները երբեք չկորչեն, Այդքան մաքուր ՍԵՐ... ուզում եմ, Որ այն միշտ մնայ յաճերժութեան մէջ...

### ԼՈՒԹԵԱՆ ՉԱՅՆԸ

Բնութեան շքեղ վարագոյրներն ընկան, Մեմախօսում է ճերմակ լուրթիւնը. Օ՛, որքան շատ եմ ծերանոցներն այս խեղճ անտառի, Դեղմել, դալկացել եմ խոտերը: Լուսամուտի սքանչելիքի մեջ միայնակ Սգաւոր լապտերը, սարսափից կծկուած, Աչքով է անում.... Իմ սրտի մէջ յաճախ անտառներ են խշշում, Դամատարած անտառներ են

զոհուում Ու գլխատուում անգթաբար.... Երգեր, որ դեռ գրուելու են ու երգուելու նորովի... Ուզում եմ բարձրանալ դիմացի մերկ լերան վրայ՝ Կանգնել ամենաբարձր գագաթին՝ երկնքին շատ մօտիկ, Պարզել թեւերս ամենագօր, գրկել լուսաբացը, մեր լուսաբացը, Ու ամբողջ հոգով բարձր գոչել ի լուր աշխարհի. - Ես սիրում եմ ձեզ, Սարդիկ....

### ԻՍ ԼՈՒՄԱՐԱՅԸ

Վաղ լուսաբաց է... թարմ առաւօտ... դու լսու՞մ ես ինձ... Բացուել է կրկին լուսաբացն այս աշխարհի վրայ, Մեր իւրաքանչիւր օրուայ, անցելի փշրուած յոյսերի Ու դեռ փոթորկուող մեր յոյգերի վրայ... Լուսաբացը սիրոյ սկիզբն է, կեանք է, շարժում է ու թրթիռ ... Մեր հոգում պահուած անթերի երագների արթնացումն է. Ես խենթի պէս եմ սիրում լու-

սաբացը... նրա ձայները բոլոր... Իմ իւրաքանչիւր օրուայ լուսաբացի պայծառ շողերի մէջ կաս դու, Նրա նուրբ-նուրբ գոյների ու մեղմ երգերի մէջ ես մշտապէս ... Ինձ համար նոյն էք դու՛ք՝ դու եւ այս լուսաբացը կատարեալ: Ուզում եմ փարուել, թեւատարած գրկել ամբողջ աշխարհը. Այսօր իմ ջերմացած հոգու քնքուշ երգերի լուսաբացն է,

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

### PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### 2012-ի ՍԵՄԻՆ ... ՊԱՅԵ ՊԱՏԿԵՐԴ, ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԴ ԵՒ ՀՈԳԵԿԱՆԴ

Նոր տարուան գալատեան հետ, անձնական որոշումները կը բազմանան եւ անոնց մեծամասնութեան նպատակը կ'ըլլայ անհատական վիճակը բարելաւել եւ հասնիլ աւելի լաւ եւ աւելի ուրախ կեանքի: Սակայն այս որոշումները կրնան թուղթի վրայ մեղան կամ օգին մէջ խօսք մնալ եթէ անոնց չընկերակցի իսկական եւ գործնական ծրագիր մը, որ կը գծէ երջանկութեան ճամբան եւ կը յստակացնէ այդ նպատակներու իրականացման ուղին:

Փրանսացի հոգեբան մասնագէտ Քրիսթոֆ Անտրէ կ'առաջարկէ 7 բանալի կէտեր, որոնք իւրաքանչիւր մարդ արարածին դիմաց կը բանայ երջանկութեան դռները եւ կ'օգնէ անոր ձեռքազատուելու ծանր հետնորդներէն, որոնք կը խոչընդոտեն անոր ընթացքը եւ արգելքներ կը դնեն անոր յաջողութեան դիմաց:

1) Որոշումը առնել դրականութեամբ.

Ուրախ ըլլալու համար նախ եւ առաջ պէտք է այդ գծով վճռակամ ըլլալ եւ ապա աշխատիլ այդ նպատակը իրականացնելու: Տիրութեան յանձնուելը եւ եղածով բաւարարուելը քեզի ոչ մէկ տեղ կ'ուղղեն, որովհետեւ երջանկութիւնը ջանք եւ մտածողութիւն կը պահանջէ: Սակայն որոշ տարբերութիւններ գոյութիւն ունին անհատներու եւ անոնց հանդուրժողականութեան ու վախը դիմակալելու կարողութեան մէջ, ինչպէս նաեւ գոհունակութեան զգացման կերպին մէջ: Հետեւաբար, երբ զգաս, թէ պատրաստ ես երջանկութեան, կրնաս դիմակալել փոփոխութեան յառաջացող վախը:

2) Չյանձնուել տխրութեան.

Եթէ բացասական զգացումներն ու մտածումները անցողակի են, կարելի է աչք փակել՝ մինչեւ անոնց անհետացումը, որպէս արդիւնք տրամադրութեան կամ անոնց ընկերակցող պարագաներու փոփոխութեան: Սակայն, երբ տխրութիւնը երկար ժամանակի վրայ իշխէ, այն ատեն տխրութիւնը կը մնանի, կը զարգանայ, կ'երկարի եւ անհատը կը վերածէ ընկճուածութեան գոհի, եթէ այդ գծով կանխագործութիւն չառնուի եւ քայլ չառնենք այդ վիճակէն դուրս ելլելու մեքանիզմ մը դնելու:

3) Տիրութեան դէմ պայքարիլ բոլոր միջոցներով.

Ընկճուած անձը կը տարուի իր վիշտերով երբ անջատուի աշխարհէն. ան տխրութիւնը կը սնանէ ինքն իր մէջ եւ անոր կը յանձնուի, երբ կը կտրուի իր բարեկամներէն եւ կանգ կ'առնէ իր նախասիրութիւնները կիրարկելէ: Հետեւաբար, ան կրնայ ապրիլ դատարկ օդակի մէջ, եթէ ինքզինք չատրպէ եւ յարատւօրէն փորձէ իր կեանքն ու գործունէութիւնները վերակազմել, նոյնիսկ եթէ տրամադրութիւն չունենայ կատարելու, որովհետեւ դէպի աշխարհին բացուելը սահման կը դնէ անոր ընկճուածութեան:

4) Օգտուել տխրութենէն.

Տրամութիւնը երբեմն օգտակար է եւ կարելի չէ անկէ փախուստ տալ կամ դիմակալել: Այդ կը մղէ մեզի մտածելու, խորհրդածելու եւ մեր շուրջ կատարուող իրականութիւններուն շուրջ խորաթափանց նայուածքներ տալու: Հետեւաբար տխրութիւնը մէջ գտնուած ժամանակ այդ հարցին պէտք չէ նայինք ընկճուածութեամբ ու բաւարարուինք մեր բախտը ողբալով եւ մեր վիճակին վրայ լալով, այլ պէտք է օգտուել անկէ եւ գայն վերածել դրական ուժականութեան, որ մեզի կը խթանէ մեր կեանքին մէջ որոշ կէտեր բարելաւելու:

5) Մտածել եւ մտավախութիւնները հանադարտօրէն դիմակալել.

Երբ հարցի մը դէմ յանդիման գտնուինք, հոգեբանական ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ մտահոգութիւնը ընդհանրապէս կ'իշխէ մեր վրայ եւ կ'արգիլէ մեզի լուծուածի մասին մտածելէ եւ մեզի կը ձգէ, որ մտածենք միայն տաղանային մեր վրայ ունեցած ազդեցութեան մասին: Հետեւաբար, հարկ է աւօրեայ մտավախութիւնները դիմակալել մտածելով եւ հանդարտօրէն խոկալով փորձելու համար գտնել ելք մը, փոխանակ մտահոգութեան եւ լարուած վիճակ ունենալու:

6) Յարձակողական զգացումները չսնանել.

Մեր տրամադրութիւնները բարձրացնելու համար միշտ կը դիմենք ուրիշները այլապէս եւ կը կեդրոնանանք անոնցմէ մեր իրաւունքները առնելու, անտեսելով մեր բացասական զգացումներուն մէջ չափազանցութիւնը, ինչպէս նախանձը եւ նեղացած ըլլալը, որոնք մեզի կը սուզեն յաւելեալ լարուածութեան եւ մտահոգութեան մէջ: Հետեւաբար, պէտք է կեդրոնանալ այս բացասական զգացումները շրջանցելուն վրայ, որովհետեւ նախ անոնք մեզի անհանգիստ կը զգացնեն մենք զմեզ հետ, ինչպէս նաեւ մեզի կ'ընկղմեն դժբախտութեան մէջ:

7) Երջանիկ վայրկեանները վայելել.

Տիրութիւնը եւ նեղացած ըլլալը յաղթահարելու լաւագոյն ձեւը բոլոր ուրախ եւ գեղեցիկ վայրկեանները վայելելն է, ինչպէս նաեւ թոյլ չտալ, որ անոնք անցնին որպէս կարծես պարզ բան մը ըլլալին: Կեանքի մէջ լաւատեսութիւնը երջանկութեան եւ հանգստութեան բանալին է, հեռու հոգերէ, որոնցմէ ի հարկէ փախուստ չկայ:

\*\*\*

Ի վերջոյ, պէտք է ըսել, թէ երջանկութեան հասնիլը կը պահանջէ յաջողիլ երեք ուղղութիւններով, որոնք են՝ մարմնայինը, զգացականը եւ մտայինը: Այս կը նշանակէ, թէ երջանկութեան հասնելու մեր նպատակին համար մենք պէտք ունինք միաժամանակ լաւ պահելու մեր պատկերը, յարաբերութիւններն ու հոգեկանը:

### ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵՆԵՆ ՍԵՐ ԻՆՉՊԵՍ Կ'ԱՆՑՆԻՆՔ ԱՌԱՆՑ ՎՆԱՍՆԵՐՈՒ

Վստահութիւնը, անկեղծութիւնն ու հաղորդակցութիւնը հիմնական գործօններն են կայուն բարեկամութիւն կերտելու, ինչպէս նաեւ իտէլապոյն տարրերն են սիրոյ առողջ շարաբերութիւն կերտելու: Այն զգացումները, որոնցմէ սկիզբ կ'առնէ բարեկամութիւնը, միեւնոյնն են որոնք սէրը կը հիմնեն, որոնց վրայ կ'աւելնան անշուշտ մարմնային ու զգացական գրաւչութիւնը: Այս պարագային կարելի կ'ըլլայ բարեկամութենէն սիրոյ անցնիլ: Ինչո՞ւ համար երկու բարեկամ կողմերը կը վախնան արկածախնդրութիւն կատարելու իրենց բարեկամութեան գծով եւ դէպի նոր հանգրուան քայլելու: Արդեօք գոյութիւն ունի՞ր որոշ միջոցներ, որոնք կ'օգնեն այդ բարեկամներուն անցնելու դէպի զգացական շարաբերութիւն, առանց ոեւէ մէկուն վնասներ պատճառելու:

\* Զգացումները բարեկամի մը տեղեկացնելը դժուար հարց մըն է եւ այդ մէկը կրնայ խախտել բարեկամութեան հիմքերը: Հետեւաբար, պէտք է լաւ մտածես այս տիպի որեւէ քայլ առնելէ առաջ եւ պէտք է դուն քեզի հարց տաս, թէ ինչո՞ւ իրմով հետաքրքրուած ես, ի՞նչ բանք քեզի կը մղէ իրեն կառչելու: Արդեօք սովորութիւնը եւ իր ներկայութեան հանգիստ զգա՞լն է հիմքը, թէ կայ ուրիշ զգացում մը, որ աւելի խորք ունի:

\* Եթէ որոշում առնես խոստովանելու, պէտք է ձգտիս աւելի երկար ժամանակ անցընելու այդ երկրորդ անձին հետ, որպէսզի հեզասահօրէն փոխադրուիք ժամադրուելու եւ տեսակցելու հանգրուանին, այս՝ եթէ իր կողմէ որոշ ներգործութիւն նկատես: Սակայն, զգոյշ եղիլ իրեն այս հարցով ուղակիօրէն հարցում ուղեղէ իր բարեկամներուն ներկայութեան կամ ժամադրութիւն խնդրելու գծով «գլուխը ցաւցնելէ»: Նախընտրելի է քու զգացումներուդ մասին ճամբան զգացականութեան պատրաստես, զինք նեղ կացութեան չմատնելու:

\* Որպէս յաջորդ քայլ, կրնաս զինք անուղղակիօրէն առիթի մը հրաւիրել, երբ երկուքով առանձին կ'ըլլաք, ինչպէս օրինակի համար շրջանին մէջ գտնուող նոր ճաշարան մը փորձել: Իսկ անոր մօտ ներգործութիւն տեսնելու պարագային, կրնաս աւելի մեծ հետաքրքրութիւն ցուցաբերել: Ան կրնայ իր հանգստութիւնը ցոյց տալ, այդպիսով քու առաքելութիւնդ կը դիւրանայ եւ կը յստականայ այն ուղեգիծը, զոր հարցերը պիտի առնեն: Իսկ եթէ ան իր նեղութիւնը արտայայտէ, պէտք է անկէ յառաջացած հակազդեցութիւններուն ու ցնցումներուն պատրաստ ըլլալ:

\* Այսպիսի ցնցում մը դիմակալելէ առաջ դուն քեզի հարց տուր, թէ արդեօք պատրաստ ես անոր, կրնա՞ս վնասին հետեւանքները ընդունիլ՝ սիրոյ յուսախաբուութիւն եւ բարեկամութեան կորուստ: Կրնա՞ս անկէ ետք ձեւացնել, որ ոչինչ պատահեցաւ: Հետեւաբար, պէտք է ներկայ եւ պատրաստ ըլլաս բոլոր հաւանականութիւններուն: Ամենայնդէպս, շատ անհրաժեշտ է յարմար ժամանակը ընտրել եւ անկեղծ խոստովանութեան համար ճիշդ ձեւով պատրաստուիլ:

\* Խոստովանութենէ ետք երկրորդ կողմին առիթ տուր մտածելու եւ խորապէս մտիկ ըրէ իր կարծիքին, որպէսզի կարենաս ճիշդ յայտնաբերել անոր խօսքին իմաստներն ու իսկական զգացումները: Անոր վստահացուր, որ դուն բաջ կը գնահատես ձեզ միացնող բարեկամութիւնը եւ պատրաստակամութիւն ունիս այդ դէպքը շրջանցելու եւ բաւականանալու ներկայ վիճակով, զայն մերժելու պարագային:

\* Իսկ ի՞նչ կրնայ պատահիլ խոստովանութենէն ետք: Կարգ մը անձեր կը յաղթահարեն այդ զգացումները եւ կը պահեն բարեկամութիւնը, եթէ երկրորդ անձը չընդառաջէ առաջադրուած հրաւերին, մինչ ուրիշներ անկարող կ'ըլլան շարունակելու: Այս հարցը կախեալ է իւրաքանչիւր անձի անհատականութենէն եւ յառաջանալու կարողութենէն, ինչպէս նաեւ անոր մօտ գիտակցութեան եւ ուշիմութեան մակարդակէն:

\* Այս սենարիոյին դիմաց կարգ մը վերլուծողներ տեսութիւն մը կը ներկայացնեն, ըստ որուն կին եւ այդ մարդիկ հաւանական չէ որ բարեկամներ ըլլան, նուազագոյնը տղամարդուն հակացողութեամբ, որ միշտ պահուած քաշողականութիւն մը կ'ունենայ իր բարեկամութիւն նկատմամբ եւ յարմար առիթը կը սպասէ այս զգացումը զգացական կամ մարմնային շարաբերութեան վերածելու: Հետեւաբար, տղամարդը պէտք չէ տատամսի իր համակրանքը յայտնելու իր բարեկամութիւն կատմամբ (գոյութեան պարագային), եւ կրնն ալ պէտք չէ վախնայ անոր բարեկամութիւնը կորսնցնելէ: Ծատ անհրաժեշտ է զգացումները բիւրեղացնել եւ ժամանակ չի կորսնցնել, որովհետեւ ձգձգելը հոգեկան վնասակար ճնշում կը յառաջացնէ, որ կրնայ շարաբերութեան վնաս հասցնել եւ գայն այլանդակել, մասնաւորապէս բարեկամը ուրիշ անձի մը հետ շարաբերութեան մէջ է: Իսկ յստակութիւնը հարցերը դէպի լոյսի կը հանէ եւ երեւան կը բերէ բարեկամութեան եւ սիրոյ միջեւ գտնուող ձերմակ եւ սեւ գիծերը:

**Զեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաքերօին**  
T: (626) 797-7680  
F: (626) 797-6863 massis2@earthlink.net

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայքայութեան Բաժնիքի բաժնի:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդադէմ եւ մկանային ցտեղի:  
Խթանալով վնասները եւ ներքին վնասները վնասազերծելու բաժնի:  
Զեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

### ՇԱՐՈՆԱԿՈՒԾ ԷՋ 13-ԷՆ

Պագեթաճի...

Բայց այս հարցը, ըստ իս, աւելի կարեւոր՝ բարոյական կողմ ունի:

Ինչպէս ասացի, «Ազգակ»-ի գրական յաւելումն ինչ նոր համարի (2011, N 9) 9-րդ էջը ամբողջութեամբ ուղղուած է նորից Աւետիք Իսահակեանի դէմ: Առաջին միտքը, որ գալիս է ընթերցողի գլուխը, այն է, թէ այս մարդը արդեօք առողջ է: Կարելի՞ է քառասուն տարի շարունակ, հետեւողականօրէն, հնարաւոր բոլոր ձեւերով, պարսաւել ու անարգել Աւետիք Իսահակեանին, էլ չեմ ասում հայ մշակութի այլ դասականներին՝ Վահրամ ֆափագեանին, Կոստան Զարեանին, ուրիշներին... Ուղղակի անհասկանալի բան է՝ յանուն ինչի՞, ինչի՞ համար, նպատակը ի՞նչ է... Մի տեսէ՛ք ինչ բառեր է գործածում եւ ինչ քամահարանքով՝ «Իսահակեանապաշտ», «գարեանապաշտ» եւ այլն: Պարզապէս ջանում է վիրաւորել, նուաստացնել: Գրականագիտութիւնը նման բառեր, հասկացութիւններ կամ եզրոյթներ չունի: Գրականութիւնը կուտուէ չէ, դասական գրողները կուռքեր չեն, ընթերցողներն էլ կուպաշտներ չեն: Այո, խիստ վիրաւորական է նման բառերով ու այդպիսի տոնով հայրենի գրականութեան ու հայ ընթերցողների մասին խօսելը:

Բայց տեսնե՛ք, թէ գրական յաւելումն այս համարում ինչ է անում Պողոս Մնայեանը, ինչպէս է վարում: Այս անգամ նա պարզապէս խորամանկում է Պերճ Պոռոջեանի Բողոքի՝ մանր փերեզակի պէս. գնում-հանում է Տիրապետի եւ այնտեղից է գալիս, սկսում է Ակսել Բակունցից եւ գալիս-հանում է համբաւաւոր գրչակ «Իրաւ դոկտոր»-ի եւ Միմոն Վրացեանի կարծիքներին, այլ խօսքով թաքնում է այլոց թիկունքում, թաքնում է, բայց, մէկ է, ականջները երեւում են:

Կարդացէ՛ք Պողոս Մնայեանի գրած «Խղձմտանքի ձայնով...» նիւթը եւ նայէ՛ք փերեզակի իր մանր խորամանկութեանը: Եւ, մանաւանդ, գրագիտութեանը: Ամբողջ նիւթին մանրամասնաբար անդրադառնալը անիմաստ է, կարգանք վերջին նախադասութիւնը, նույնիսկ միայն նախադասութեան երկրորդ կէսը. «...կարդանք x-ի (այդ արարածի անունը եւ իմ ձեռքով չեմ գրելու,- Ե.Տ.-Խ.) կողմէ երկրորդ անգամ չակերտուած «Վարպետ»ին արձանագրած միւս փաստը, ուր ան հրահանգած է «Ոչնչացնել» («Պարբերաթերթ», էջ 9): Գրագիտութեանը նայէ՛ք՝ «...փաստը, ուր...»: «Փաստ» բառը «տեղ, վա՛յր» է նշանակում, որ դրան յաջորդի տրամաբանական

«ուր»-ը: Եւ յետոյ՝ «ան հրահանգած է»: Ո՞վ է հրահանգողը, «ան»-ը գրականագէտ կոչուածն է, թէ Իսահակեանը:

Ինչպէս ասացի, Պողոս Մնայեանը հերթական անգամ սրբապղծութիւն է անում՝ փորձելով անարգել Աւետիք Իսահակեանին, այս անգամ թաքնուելով այլոց թիկունքում: Նա պարզապէս ընդունակ չէ հասկանալու Իսահակեանի վսեմական բանաստեղծութիւնը եւ ըմբռնելու այն անհուն սէրը, որ տածում է մեր ժողովուրդը Իսահակեանի անձի ու գրականութեան հանդէպ: Օտար մարդը դա գգում-հասկանում է, Պողոս Մնայեանը չի հասկանում: Ի՞նչ է, քսաներորդ դարի մեծ բանաստեղծներից մէկը, ռուս Ալեքսանդր Բլոկը, Մնայեանի չափ գրականութիւն չէ՞ր հասկանում (մեղա՛յ, մեղա՛յ), երբ 1912 թուականին գրում էր, թէ Իսահակեանի պէս հօգոր տաղանդ հիմա ողջ Եւրոպայում չկայ:

Մի րոպէ պատկերացրէ՛ք, թէ 1912 թուականին Եւրոպայում ինչ հօգոր բանաստեղծներ կային՝ Ապոլլիներից մինչեւ Ռիլկե:

Ի՞նչ է, Եղիշէ Զարենցը Պողոս Մնայեանի չափ գրականութիւն չէ՞ր հասկանում (դարձեալ եւ վերստին մեղա՛յ, մեղա՛յ), երբ իր վերջին խօսքը ուղղում էր Աւետիք Իսահակեանին.

Որքան գնում - այնքան խոնարհ, Այնքան անհուն եւ այնքան ջերմ, եւ խոնարհում եմ քեզ առջեւ Ե՛ւ սէր, Ե՛ւ սիրտ, Ե՛ւ բնար:

Եղիշէ Զարենցը մինչեւ գետին խոնարհուած է Իսահակեանի առջեւ, Պողոս Մնայեանը քառասուն տարի անարգում է Իսահակեանի անունն ու յիշատակը:

Այստեղ, իհարկէ, կրկնում եմ, գրականութեան հարց չէ, այլ բարոյական ըմբռնումների: Լաւ, ի՞նչ աններելի լանցանք է գործել Աւետիք Իսահակեանը: Որ վերադարձե՞լ է հայրենիք: Այո, որ վերադարձել է հայրենիք: Այո, վերադարձել է, այո, սովետական իշխանութեան հանդէպ դիրքորոշում է փոխել: Բայց միայն դիրքորոշում եւ ոչ թէ ներքին համոզմունք: Հազար փաստ ու փաստարկ կայ, մէկի մասին ես գրել եմ Պէյրութի «Կամար» հանդէսում (2010, N 11, «Փաղտնասացութիւն»): Աշխարհում պարզ բաներ կան, Պողոս Մնայեան, որ հնարաւոր է հասկանալ նոյնիսկ առանց կողմնակի օգնութեան: Մարդը տեղի է տալիս բիրտ, կենդանական, ուղղակի անասնական ուժի առաջ, տեղի է տալիս, բայց չի յանձնուած, չի պարտուած: Ուրեմն, բաներ կան, որ պէտք է հասկանալ կամ ջանալ հասկանալու: Ինչ է, Ակսել Բակունցի նման լուսաւոր, մեծ գրողը եւ անբասիր,

ուղղակի սուրբ անձնաւորութիւնը չի՞ գրել «Ձանգեգուր» սցենարը: Մի բան է, երբ մեծատաղանդ անհատը, ճարահատ եւ յուսահատ մարդը տեղի է տալիս բիրտ, անասնական ուժի դիմաց, դիրքորոշում է փոխում (մի՞թէ այլ ուղի, ճանապարհ, հնարաւորութիւն կար հայրենիք վերադառնալու), մէկ այլ բան է, երբ անտաղանդ մարդիկ՝ գրական խուժանը, հորթային հրճուանքով կամաւոր, ընդառաջ վազելով, դառնում էին դահիճների աջակիցը, նրանց ձեռքի գործիքն ու կամակատարը, եւ նոյնիսկ աւելի՛ ջանադիր, առաւել՛ անասնական, առաւել՛ դահճական:

Երբ 1958 թուականի Հոկտեմբերի 31-ին Մոսկուայի Գրողների Միութեան Ընդհանուր ժողովը Բորիս Պաստեռնակին երկրից արտաքսելու որոշում է կայացնում, Պաստեռնակը նոյն օրը գրում է յայտնի նամակը՝ ուղղուած պատկան մարմիններին, որով խնդրում-աղաչում է իրեն չարտաքսել երկրից, նախապէս յօժարակամ ընդունելով ամէն տեսակի այլ պատիժ, ընդհուպ բանտ եւ աքսոր: Բանն այն է, որ նման մեծ անհատականութիւնների համար հայրենիքի մէջ բանտում լինելը ա՛յլ ազատութիւն է, օտարութեան մէջ ազատ լինելը՝ ա՛յլ բանտ ու անազատութիւն: Իսահակեանի մեծութեան բանաստեղծը, իհարկէ, պէտք է վերադառնար: Եւ վերադարձից յետոյ նրա կեանքը ամենեւին էլ երանութեան մէջ չի անցել: Տեղը չէ այդ ամէնը մանրամասնելու: Այդ մասին շատ է գրուած, մարդիկ փաստերով ու ստույգ վկայութիւններով են գրել դրա մասին:

Աւետիք Իսահակեանի հանդէպ մեր ժողովուրդը ունեցել է եւ ունի անսահման սէր եւ սրբազան երկիւղածութիւն: Իր պոէզիան, իր գրականութիւնը մեր ժողովրդի հոլթեան անբաժան մասն է, նրա սիրտն ու ոգին: Իմ հօրեղբոր որդի Գէորգ Տէր-Պաշտարեանը, որ 1957-ին հազիւ քսան տարեկան էր եւ գործարանի հասարակ բանուոր, Հոկտեմբերեան այդ օրը ընկերների հետ փախչում է աշխատանքից (մի՛ մոռացէ՛ք, սովետական երկիր էր եւ դեռեւս 1957 թուականը) եւ գնում է մասնակցելու Վարպետի յուղարկաւորութեանը: Եւ ամբողջ կեանքում իրեն երջանիկ էր զգում, որ երկու-երեք մեթր իր ուսերին տարել է Վարպետի դագաղը, մինչդեռ իր ընկերները հազիւ հասցրել են ձեռքով դիպչել դագաղին: Հայ ֆիլիսարմոնիայի փոքր դահլիճից մինչեւ Կոմիտասի անուան գրօսայգի, մինչեւ Պանթէոն լցուած հազարաւոր մարդիկ պարզապէս իրենց գլուխները վրայով ձեռքից ձեռք փոխանցելով են Վարպետին հասցրել վերջին հանգրուան: Սա՛ է

համաժողովրդական սէրն ու յարգանքը: Եւ սա է, որ այդպէս էլ անհասկանալի կը մնայ Պողոս Մնայեանին:

Եւ, վերջապէս, վերջին հանգամանքը: Մի նայէ՛ք, թէ ո՞վ է դատում Աւետիք Իսահակեանին: Միմոն Վրացեանի պարագային ամէն ինչ ինքնին հասկանալի է: Պողոս Մնայեանի պարագան նոյնպէս հասկանալի է. սա փղի ու քոթոթի յայտնի առակի հոսողական նկարագրաբան է: Բայց Իսահակեանին դատում է նաեւ Սովետական Հայաստանի Կոմունիստական (բոլշեւիկների) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գաղափարական բաժնի ղեկավար եւ պատասխանատու (ճիշտ է, նախկին) աշխատողը, նա, ով Հայաստանում, ի պաշտօնէ, վերահսկում էր ոչ միայն ընկեր Բերեթեւէի, ընկեր Անդրոպովի, ընկեր Չեռնենկոյի եւ ընկեր միւսների գրքերի ըստ արժանուոյն հրատարակութիւնը, այլեւ Հանրապետութեան ողջ գաղափարական մթնոլորտն ու կեանքը, լենինեան վսեմ եւ անմահ գաղափարների տարածումն ու ամրապնդումը: Չգիտես ինչ ասես, անհեթեթութիւնն ասես, բայց անհեթեթութիւնը շատ մեղմ բառ է, ուղղակի ուղեղի գառանցանք է: Իսահակեանը դիրքորոշում է փոխել, առանց, իհարկէ, ներքին համոզմունք փոխելու, իսկ Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գաղափարական բաժնի աշխատողը, ով իրագործում էր լենինեան գաղափարախօսութիւնը, դատապարտում է Իսահակեանին՝ ընդհանուր տեղիք դարձած երկու բառով սովետական իշխանութեան հանդէպ իր ձեւական համակրանքն արտայայտելու համար:

Պողոս Մնայեանը պէտք է լաւ հասկանայ,- հաւանաբար, շատ լաւ էլ գիտի,- որ ամէն մի պատահական մարդու չէին տանի Կենտկոմ եւ վստահի ուժեղ մի գաղափարախօսութեան իրագործումը: Ենթական պէտք է առանձնապէս վստահելի մէկը լինէր եւ ուժեղ մի կատարելապէս նուիրուած:

Սովետական իշխանութեան տարիներին «Բագին» ամսագրի նախկին խմբագրի եւ Հայաստանի Կոմկուսի կենտրոնական կոմիտէի գաղափարական բաժնի նախկին ղեկավարի նոյնականութիւնն ու սերտ միասնութիւնը ուղղակի անհաւատալի ու անհեթեթ կը թուար. ախր շատ էինք նայել, միամիտ ու դիւրահաւատ: Այսօր դա շատ էլ լաւ հասկանալի է, բնական ու տրամաբանական: Նման իրողութիւնը ոչ միայն գաւեշտական է, այլեւ շատ ողբերգական: Հենց դա է, եւ եթէ կ'ուզէ՛ք, մեր ժամանակի ու մեր կեանքի ողբերգութիւնը: (Շարունակելի)

**ՎԱՐՉՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒՐ ԸՄՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՄՍԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
**ՍԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680**

ՅԵՐԵՎԱՆԻ Մշակութային Միութիւն «Լուս Ամօլոս»  
 Արտոյ կը կրպակը Ձեզ

**ԴՈԿՏ. ԸՐԱՆԴ ԱՃԵՄԵԱՆԻ**  
 Մեծարանքի համոզիտութեան  
 50-ամեայ մշակութային  
 ծառայութեան առիթով

Նոր Կրկնում  
**ԲԱՐՍԵՂ ԳԱՐՅԱԼԵԱՆ**  
 - «Աճմանի վաստակը»  
**ԿԱՐՈ ՊԵՏՐՈՍԵԱՆ**  
 - «Անմայի անկրկնապ վարպետանման պատմութեան»  
**ՎԱՇԷ ՍԵՄԵՐՅԵԱՆ**  
 - «Լուսագործի քայքայուած հայրենիք»

Գեղարունատալ քաղցր  
**ԳԻՆԿԱՐՅԱՆ, 2 ՓԵՏՐՈՒՐ, 2012**  
 Երեւանի ժամ 7:30Ի

**ԳԵՅՈՑ ՍՈՍՆՆՈՐՈՒՐԱՆԻ**  
**ԱՆՂՐԱՆԿ ԲՕՐԱՅԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ**  
 3325 Glenoaks Boulevard, Burbank, California 91504  
**ԳԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՑԸ ԱՅՍ**

### ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹԱՆԱԿԵՑ

#### Շարունակում է 1-ին

Եւ Բուէնքոն Զախչախիչ գերակշռութեամբ վաւերացուց՝ դեռեւս նախքան Ա. Աշխարհամարտը, 1911-ին ծրագրուած՝ հայ ժողովուրդի դէմ դաժանօրէն գործադրուած կանխամտածուած Ցեղասպանութեան ժխտումը քրեական յանցագործութիւն համարող օրինագիծը:

Ֆրանսայի Երեսփոխանական եւ Մերակոյտի ժողովներու, գիրար համալրող Բուէնքոնի մեքերը կու գան ապացուցելու այսօր, քէ՛ մարդկութեան դէմ գործուած ցեղասպանական իրագործումները անպատիժ պիտի չի մնան երբեք: Թէ՛ պատմական նշարտութիւններու խնդարիւրումները, ուրացումները, զանոնք դաւանողներու դէմ բռնութիւններու, ազատագրկումներու սպանութիւններու կիրարկումները անտես պիտի չմնան երբեք: Թէ՛ ամէն անգամ որ պետութիւն մը Օսմանեան Կայսրութեան, 1915 թուին, հայ ժողովուրդի դէմ իրագործած կանխամտածուած Ցեղասպանութեան նման ման հարցը օրակարգի անցնէ՝ Թուրքիա իրար կ'անցնի: Ինքզինքը կորսնցնէ: Կրգգուշացնէ: Սպանուալիներ կը կարդայ անոր դէմ:

Ուշագրաւը՝ Թուրքիա միշտ ալ հասած է իր ամօթալի նպատակին, պատմադրանալով, որ արդարամիտ, գիտականօրէն առաջադէմ, անգամ գերօր ու տիրա-

կան պետութիւններ գոյւշանան քիկուներ կ'անգնել, հայոց դէմ իրագործուած օսմանական Ցեղասպանութիւնը նանչնալէ: Հոս, աւելորդ կը նկատենք կարգին անդրադառնալ՝ այդ առնչութեամբ խոստումնադրուած կանխագահներու վարկաբեկման, որոնք տակաւին կը գոյւշանան Ցեղասպանութիւն քառը գործածելէ:

Գերօր տէրութիւններու շարքին գտնուող ասպետական ֆրանսա, այսօր առաջինը հանդիսացաւ մերժելու Թուրքիան չմեղացնելու, միջազգային քատերաբեմի վրայ իր գրաւած աշխարհատարածքային ռազմավարական դիրքով եւ Միջին Արեւելէ՛ ներս իր ունեցած այսպէս ներկայացուած կրօնական ու զինական դաւադիր պղծութեամբ քաղաքական կարեւոր օղակ դաւանող, այլապէս զինք շփացնող արուեստական անհոյսութիւնը:

Մենք կը հաւատանք, որ Ֆրանսայի՝ տղամարդու այս կեցումով շուտով պիտի հետեւին ուրիշներ եւ այս, յանուն՝ արդարութեան յաղթանակին: Յանուն՝ պատմական նշարտութիւններու եղծանումին, ուրացումի դատապարտումին: Յանուն՝ անկար ժողովուրդներու դէմ նիւթուող նոր Ցեղասպանութիւններու արգիլումին եւ պատժումին: Յանուն՝ մարդկութեան ապահով, խաղաղ եւ քարգաւան կեանքի կատարելագործումին:

### ԳՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՆԱՐԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԳԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄ

#### Շարունակում է 7-ին

մշակույթ եւ հազարամեայ ինքնութիւն: Ան շեշտեց որ, եթէ մեր կեանքի ընթացքին պիտի հասնինք ճշմարտութեան յաղթանակին, ուրեմն հայ մարդը եւ հայոց հողը իրար պիտի գտնեն, այս ըլլալով Հրանդ Տինքի ժառանգութիւնը, թողած պատգամը եւ կիսաւարտ աշխատանքը:

Հանդիսավարը բեմ հրաւիրեց տուտուկահար Ալպէր Վարդանեանը, անոր հակիրճ կենսագրական կարգալէ ետք: Վարդանեան նուագեց «Տըլէ Եաման» եւ «Սիրեցի երա տարան» մեղեդիները: Ապա հրաւիրուեցաւ The Armenian Observer շաբաթաթերթի տէր եւ տնօրէն Փրօֆ. Օշին Քէշիշեանը որ յայտնեց թէ Հրանդ Տինք միայն հայերու հարցով չէր զբաղէր, այլ՝ արաբներու, հրեաներու, թուրքերու ալ: Ան խօսեցաւ անոր անասման քաջութեան, անվախութեան, ոչ միայն հայ ըլլալու մասին, այլ՝ նաեւ իր լաւ մարդ արարած մ'ըլլալուն եւ այս լաւութիւնը շատ մը ժողովուրդներուն փոխանցած ըլլալուն մասին:

Յուցադրուեցաւ նաեւ տեսաերից մը Փրօֆ. Օշին Քէշիշեանի եւ Հրանդ Տինքի հետ միասին ուր Փրօֆ.ը հարցազրոյց մը ունեցած էր ութ տարիներ առաջ, նիւթ ունենալով քաղաքական հարցերը եւ

հայ-թուրք փոխ յարաբերութիւնները:

Գեղարուեստական յայտագրով բեմ հրաւիրուեցաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի անդամուհի՝ Իլտա Թանօղլուն, որ մենեղեց Հրանդի նախասիրած երկու երգերը «Մարի կէլին» եւ «Մարերի հովին մեռնեմ», երգերը:

Հանդիսավարը ընթերցեց պատմաբան Փրօֆ. Թանէր Աքչամի կենսագրականը ապա հրաւիրեց զանիկա որպէսզի խօսի թուրքիոյ ներկայ դիրքի մասին Տէրսիմի Չարդերու համար ներողութիւն ինդրելէ ետք: Ան յայտնեց թէ որքան ուր իրաւախոսութեամբ աւարտի աւանդական ուժերը նոյնքանով պիտի աւելնայ ցեղասպանութեան ուրացումը: Հրանդ Տինքը թէ կղպանքն էր եւ թէ ալ բանալին թուրք Հանրապետութեան գաղտնի սենեակին եւ իր կտակն էր պայքարիլ Ցեղասպանութեան ճանաչման եւ մարդկային իրաւունքներու համար:

Գերշ. Տ. Վահէ Արք. Յովսէփեան, իր կարգին խօսեցաւ մահուան երկու երեւոյթներու մասին բնական եւ նահատակեալ: «Նահատակները անոնք են որոնք իրենց կեանքը կը գոհեն սկզբունքի համարե ըսաւ ան եւ Հրանդ Տինք նահատակ մըն էր պատմութեան մէջ»:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հարց-պատասխանի պահ, ինչպէս նաեւ հիւրասիրութիւն:

### ԿԵԱՆՔԸ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

#### Շարունակում է 8-ին

դասարանէն՝ Քրիսթա Քիւրզեան եւ Քրիսթիանա Պէթէլ եւ Երդ դասարանէն Մեղրի Մարգարեան, որոնք ստացան «Ապագայի Ղեկավարներ» խրագրով վկայագրեր, իսկ Փիթըր Տէմիրճեան արժանանալով բարձրագոյն մրցանակին, ստացաւ 1000 տոլար կրթաթոշակ:

#### ՄԵԾԱՐԱՆՔ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒՆ

Դեկտեմբեր 9ը յատուկ կարեւորութեամբ նշուող թուական մըն է Հայ Քոյրերու Վարժարանէն ներս:

Դեկտեմբեր 9ը այն թուականն է, որ հայ ժողովրդի ազնուասիրտ եւ անձնուրաց դուստրեր կը խոստանան իրենց անձը ուրանալ եւ զայն նուիրել ազգի զաւակներու ծառայութեան: Եթէ կամաւոր գիտուորը կ'երդնու պատերազմի դաշտին վրայ գոհուելով հայրենի հողը պաշտպանել՝ Անարատ Յղութեան

դէսներ՝ մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններով, երկու յատուկ օրերու ընթացքին, հոգեկան մեծ հաճոյք եւ հրճուանք պատճառելով ծնողներուն եւ Հայ Քոյրերու վարժարանի մեծ ընտանիքին:

Շաբաթ, 17 Դեկտեմբեր 2011ին առաւօտեան, տեղի ունեցաւ մանկապարտէզի հանդէսը, Հայ Քոյրերու Վարժարանի «Դանիէլեան» սրահէն ներս, ներկայութեամբ հոծ բազմութեան:

Հանդիսութեան բացումը կատարեց մանկապարտէզի տնօրէնուհի Տիկին Սոնա Գազանճեան: Բացման խօսքէն ետք մանկապարտէզի աշակերտները ներկայացուցին Յիսուսի Մնունդը երգախառն թատրերգութեամբ, սկսելով Հրեշտակի Աւետումէն, Գալիլիոյ մէջ տեղի ունեցած մարդահամարի գործընթացէն, Յովսէփի եւ Մարիամի դժուարին վիճակէն... մինչեւ Մնունդը, մոգերու, հովիւներու գալուստը... եւ Աւետիսը... մանկապարտէզի աշակերտները, իրենց մանկական անմեղ արտայայտութեամբ պատմելէ ետք Ս.



միաբանութեան հայ քոյրերը կ'երդնուն իրենց կեանքի առանցքը դարձնել հայ մանուկն ու պատանին, ապա անկէ ետք սերունդներու դաստիարակութիւնը կը դառնայ իրենց մտասեւեռումը, իրենց աշխարհը:

Հայ Քոյրերու Վարժարանի այս տարի եւս մեծ շուքով տօնեց Անարատ Յղութեան Միաբանութեան հիմնադրութեան օրը, մասնաւորաբար նշելով, վարժարանէն ներս անխոնջ եւ ժիր աշխատող Առաքինագարդ քոյր Գայեանէ Դասլաքեանի ծառայութեան յիսնամեակը: Դեկտեմբեր, 7, 2011ի առաւօտեան տեղի ունեցաւ աշակերտական Ս. Պատարագ, որուն յաջորդեց աշակերտներու կողմէ յատուկ արթթքներու եւ մաղթանքներու ընթերցում՝ ուղղուած Անարատ Յղութեան Միաբանութեան բոլոր նուիրեալներուն եւ յատկապէս աշակերտներու սիրելի քոյր Գայեանէին, ապա տեղի ունեցաւ պատշաճ նախաճաշ՝ կազմակերպուած ուսուցչական վարժարանէն ներս ծառայող առաքինագարդ քոյրերուն:

Մննդեան պատմութիւնը երգեցին ու աւետեցին Փրկչին գալուստը, սիրոյ եւ խաղաղութեան պատգամը տալով բոլորին: Երգերը կը ղեկավարէր ու դաշնակի վրայ աշակերտներուն կ'ընկերակցէր վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեան:

Դեկտեմբեր 22, 2011ի երեկոյեան Հայ Քոյրերու Վարժարանի աւանդական երազահանդէսն էր, նուիրուած Ս. Մննդեան եւ Ամանորի տօներուն: Հանդիսութիւնը բաժնուած էր երեք մասերու, նախ փոքր դասարաններու աշակերտները, ապա երկրորդ բաժնով ներկայացան երրորդ կարգի աշակերտները եւ վերջապէս թեմային հոգեբանները: Ներկայացուած երաժշտական երգերը պատրաստուած էր վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պաղտասարեանի կողմէ, իսկ ոտանաւորները հայերէն լեզուի ուսուցչուհիներուն կողմէ:

Հանդիսութիւնը վերջ գտաւ վարժարանի տնօրէնուհի քոյր Լուսինայի եզրափակիչ խօսքով, որ գոհունակութեան արտայայտութիւն էր ի տես Քրիստոսի Մնունդը ներկայացնող կազմակերպուած գեղեցիկ աշխատանքին:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՆԴԻՍ  
Հայ քոյրերու վարժարանը ըստ աւանդութեան այս տարի եւս ունեցաւ Ս. Մննդեան գոյգ հան-

**«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**Ժամը 10:00–ից 12:30**  
**Կլէնտոյլի 380-րդ կայանից**

**ՄԱՍԻՍ**  
**ԱՍԵՆԱՎՍԱՆԱՇԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՇԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

### ՇՈՒՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ



ՄԱՐԻԱՄ ԱԶԻՄԵԱՆ

ՄԱՐԻԱՄ ԱԶԻՄԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունուար, 2012ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd., Pasadena, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝
- Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան եւ զաւակները Յարութ Անի
- Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Մարի Աճէմեան եւ զաւակը Աւետիս
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան եւ զաւակները Ռաֆֆի եւ Գոհար
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սառա (Սեդա) Գրիգորեան եւ զաւակները Աբգար եւ Կասիա
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ալլա Աճէմեան եւ զաւակները, Մարիամ, Միքայէլ, Տանիէլ, Գաբրիէլ, Ղազար
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Արմինէ Աճէմեան եւ զաւակները Ենովք եւ Նարեկ
- Թուր Սեւակ եւ Անժէլ Գրիգորեան եւ զաւակը Կարօ:

### ՇՈՒՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԻԱՄ ԱԶԻՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները որոնց համար շնորհակալութիւն կը յայտնէ վարչութիւնը:

- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Հայկօ Գալթագճեան \$500
- Հ.Մ.Մ. Տիկնանց Օժանդակ Մարմին \$200
- Սիփան Երզնիստմբ \$200
- Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրօղլեան \$200
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Գաթիա Խոտանեան \$100
- Ատրիէն եւ Լիլիան Սաղրեան \$100
- Վարսենիկ Պաղպուտարեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան \$100
- Յովան եւ Սիրան Գարսոյեան \$100
- Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան \$100
- Տէր եւ Տիկ. Ոսկերեան եւ Կարինէ Ղազարեան \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփի Մարգարեան \$100
- Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազէզեան \$100
- Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիւզան Պոյաճեան \$100
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան \$100
- Կիլիկեան Բարեսիրական Միութիւն \$100
- Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան \$100
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան \$50

### ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայօ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

### ՇՈՒՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՅՆՄԱՐ ԶԻԼԵԱՆ-ՄԱՆԿՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղած են Փաստորնայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ

- Տէր եւ Տիկ. Միհրան եւ Սաթիկ Տէր Օհաննէսեան \$200
- Տէր եւ Տիկ. Արմէն եւ Ռիթա Պարանեան \$100
- Վերժին, Ճենի եւ Վահէ Մանկրեան \$100
- եւ Վահէ Սահակեան
- Տիրան ճէրէճեան \$100
- Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Թալին Գէշէճեան \$100
- Տիանա Գեպպաճեան \$100
- Տէր եւ Տիկ. Էմմանուէլ Պետրոսեան \$100
- Տէր եւ Տիկ. Վահէ եւ Արփի Մանկրեան \$100
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Շաքէ Գոնիալեան \$50
- Մանուկ Մանկրեան \$50
- Իսկուհի Մանկրեան \$50
- Ալվի Կրաշեան \$50
- Ժանէթ Գէորգեան \$50
- Ճոն Մէյմէրեան \$50
- Վարդուհի Եղիշեան \$25
- Տէր եւ Տիկ. Իշխանեան \$20

ՆՈՅՆՄԱՐ ԶԻԼԵԱՆ-ՄԱՆԿՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի եղած են հետեւեալ նուիրատուութիւնները Հ.Կ.Մ.ին

- Կարօ Էսքիճեան \$100
- Տէր եւ Տիկ. Գրիգոր Մալճեան \$100
- Հաճոյ Հայրենակցական Միութիւն \$100
- Տէր եւ Տիկ. Մինաս եւ Սոնա Մալճեան \$100
- Տիկ. Արաքսի Ուրիշեան \$50

### ԳԻՐՔԸ ՀՈԳՈՒ ՀԱՅ Է

Շարունակուած էջ 14-էն

հեքիաթ, ամենակարեւոր գաղափարներից մէկը մեր կեանքում հրաշքն է: Եկէք, ուրախանանք եւ սիրենք իրար»:

Այնուհետեւ հեղինակը ուսուցիչներով կարգաց իր բանաստեղծութիւններից, իսկ նոյնը սիրուած դերասանուհի Շաքէ Թոխմանեանը հայերէնով ասմունքեց գրքի վրայից, երկու դէպքում էլ կատարեց ապրումով եւ չուզախառն արժանանալով լսարանի ծափողջոնների:

Այնուհետեւ հրաւիրեց գրքի թարգմանիչ՝ Արտեմ Յարութիւնեանը:

Արդէն նա հանգամանօրէն իր գրախօսականով՝ «Երբ գուշակումը դառնում է կեանք» խորագրով ապառիչ ներկայացրել է գիրքը, որը դրուած է գրքում էջ 121-139-ը: Նրա սրահում կատարած ելույթը մասամբ կրկնողութիւնն էր գրախօսականի: Այստեղ բերում ենք նոր խօսքերն ու գնահատականները:

Այսպէս է սկսում իր ելույթը, յաճախ էլ ուսուցիչներով մեկնաբանութիւն եւ անգլերէնով նշանաւոր ամբերիկեան գրողներից մէջ բերումներ կատարելով:

Այս պահը ի հարկէ թարգմանչի համար սեփական նաեւ երեկոյի ոչոն ունի: Թարգմանիչը մտնում է գրքի մէջ, այն պահին, երբ հեղինակը վերցրել է գրիչը եւ սկսել է գրել, ինչի դա տաս տարի առաջ թէ հիմա, նա այդ պահին մտնում է համակարգի մէջ, փորձում է ստեղծել հեղինակին հաւասար այլ լեզուով գրականութիւն: Թարգմանիչը նաեւ ակամայ դառնում է յուշարար... Ես հաճոյքով եմ թարգմանել Նատելա Լալբեկեանի այս գիրքը... նշանակալից գիրք է, ոչ թէ իր կեանքում, ոչ թէ իմ

կեանքում, այլ մեր հայ գրականութեան համար: Այն, նայէք այդ ապրտակաթուղի գեղեցիկ կարապի պէս Լոս Անջելէսի ամբերին իջած գրքովը եւ կը տեսնէք թէ ինչքան հնարամիտ է, Ձանգեգուրեան ինչ ոչոն ունի այդ քնքուշ նիհարակազմ աղջիկը եւ ինչպէս է պատկերում այն աշխարհը, որ թուում է հեռացել է եւ այլեւս չի վերադառնալու, սրա մէջ է մեր ժողովրդի տոկունութիւնը՝ Ժամանակը ամէն ինչ աւերում է, աւերելու է բոլոր տեսակի բրգերն ու բարձրացարկ շէնքերը, բայց ժամանակը անգոր է գրի առաջ, ժամանակը գլուխը խոնարհում է դրա առաջ: Նատելա Լալբեկեանը ներկայիս մեր իրականութեան մէջ լաւագոյն կին գրողն է:

Երեկոն բանաստեղծական ոգի գգեցաւ, գրեթէ գրքի բոլոր բանաստեղծութիւնները կարդացւեցին՝ ուսուցիչները հեղինակի կողմից, իսկ այս անգամ հայերէն տարբերակը կարդաց Արտեմ Յարութիւնեանը:

Ունեցանք նաեւ երգի գեղարվեստական ներկայացում: Հեղինակի բանաստեղծութիւններից երգի վերածուած, կատարեց Լիա Կոլոյեանը, հրաշալի երգեցողութիւն, որը արժանացաւ բուն ծափերի:

Հեղինակի ուսուցիչները՝ Galina Jovovi Ch-Loginova-բեմ հրաւիրեց: Նա իր արտայայտութեան մէջ անդրադարձաւ հեղինակի եւ գրքի մասին, դրամատանքի եւ հիացումի խօսքերով բարձրօրէն գնահատեց հեղինակին:

Պոէզիայի հետաքրքիր երեկոյ, առաջին անգամն էր, հայկական միջավայրում, ուսուցիչներ կար ելույթների ունկնդիր էի դառնում:

Հանդէսի աւարտին կատարեց հիւրասիրութիւն:

massispost.com  
daily news updates



